***ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ***
***ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ ՄԻԱՎՈՐՎԱԾ***
***ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ, ԾԱՂԿԱՀՈՎԻՏ,***
***ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ, ՎԱՐԴԵՆԻՍ,***
***ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՏԱՇԻՐ, ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ,***
***ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ, ԵՂՎԱՐԴ, ՄԵՂՐԱՁՈՐ, ՉԱՐԵՆՑԱՎԱՆ,***
***ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ, ԱԽՈՒՐՅԱՆ, ՄԱՐՄԱՐԱՇԵՆ,***
***ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ,***
***ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ,***
***ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ***
***ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ***



***ԱՐԹԻԿ 2019***

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Սույն զեկույցը կազմվել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումի «Կառուցողական երկխոսության հանձնառություն» (ENI/2016/382-304) ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում իրականացվող «Վարչատարածքային բարեփոխումների երրորդ փուլում միավորված Արագածոտնի մարզի Ապարան, Ծաղկահովիտ, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Վարդենիս, Լոռու մարզի Ստեփանավան, Տաշիր, Գյուլագարակ, Կոտայքի մարզի Բյուրեղավան, Եղվարդ, Մեղրաձոր, Չարենցավան, Շիրակի մարզի Անի, Ախուրյան, Մարմարաշեն, Սյունիքի մարզի Սիսիան, Վայոց Ձորի մարզի Արենի, Տավուշի մարզի Բերդ համայնքներում կառավարման արդյունավետության ուսումնասիրություն» (ENI/2016/382-304-SG-29) ծրագրի արդյունքներով՝ «Մարդկային կապիտալի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Մարդկային կապիտալի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական Միության տեսակետները:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

HUMAN CAPITAL DEVELOPMENT CENTER

«Human Capital Development Center» NGO

Abovyan street 8a, Artik city, Shirak Region, Republik of Armenia

informlist@list.ru,  coalition.am@gmail.com

+374 94310598

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


2 Զեկույցում կիրառված հապավումների ցանկ
2 Աղյուսակների, գծապատկերների, քարտեզների ցանկ
4 ԱՌԱՋԱԲԱՆ
8 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
12 ԲՆԱԳԱՎԱՌ 1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ
12 Վարչատարածքային բարեփոխումներ
12 Առաջարկություններ
14 Աղյուսակ 1. Մեկ համայնքի բնակչության միջին թիվը և մեկ համայնքի վարչական տարածքի միջին չափը՝ ըստ խմբերի
15 ԲՆԱԳԱՎԱՌ 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ
15 Համայնքի սեփականություն, գույք
16 Համայնքի զարգացման ծրագրեր և բյուջե (պլանավորում և բյուջետավարում)
18 Համայնքի բյուջետային եկամուտներ և ծախսեր
18 ՏԻՄ-երի լիազորությունների և ֆինանսների համապատասխանություն
19 Առաջարկություններ
21 Աղյուսակ 2. «Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի
22 ԲՆԱԳԱՎԱՌ 3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ (ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ
23 Սոցիալական ուղղվածություն ունեցող ծառայություններ (կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն և այլն)
25 Առաջարկություններ
27 Աղյուսակ 3. «Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի
29 ԲՆԱԳԱՎԱՌ 4. ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
29 Ընտրական գործընթաց
30 Հանրային մասնակցություն և հաշվետվողականություն
30 Ֆինանսական հաշվետվողականություն
30 Առաջարկություններ
32 Աղյուսակ 4. «Տեղական ժողովրդավարություն» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի
33 ԲՆԱԳԱՎԱՌ 5. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
33 Մարդկային ռեսուրսների կառավարում
33 Համայնքային ծառայություն
34 Աղյուսակ 5. «Համայնքի կառավարում» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի
35 ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
36 Աղյուսակ 6. Համայնքային խմբերի համար համաթվի հաշվարկման արդյունքները՝ ըստ գործառույթների և ըստ բնագավառների (2018թ.)
37 Գծապատկեր 1. Համաթվերի համեմատական ըստ բնագավառների և ըստ խմբերի
38 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
40 Աղյուսակ 7. ՏԻՏԻ ցուցիչների գնահատումը՝ ըստ ՏԻ բնագավառների և գործառույթների
49 Հղումներ
49 Հիմնական տեղեկատվության աղբյուրներ

**Զեկույցում կիրառված հապավումները՝**

| | |
|---|---|
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՏԻ | տեղական ինքնակառավարում |
| ՏԻՄ | տեղական ինքնակառավարման մարմին |
| ՀՀԶԾ | համայնքի հնգամյա զարգացման ծրագիր |
| ՏԱՊ | տարեկան աշխատանքային պլան |
| ՊՀԿ | պաշտոնական համացանցային կայք |
| ՏԻՄ օրենք | «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք |
| ՏԿԵՆ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| ԽՍՀՄ | Խորհրդային Սովետական Հանրապետությունների Միություն |

**Աղյուսակների և գծապատկերների  ցանկ**

Քարտեզ 1. Վարչատարածքային բարեփոխումների երրորդ փուլով միավորված համայնքներ:

Աղյուսակ 1. Մեկ համայնքի բնակչության միջին թիվը և մեկ համայնքի վարչական տարածքի միջին չափը՝ ըստ խմբերի:

Աղյուսակ 2. «Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի:

Աղյուսակ 3. «Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի:

Աղյուսակ 4. «Տեղական ժողովրդավարություն» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի:

Աղյուսակ 5. «Համայնքի կառավարում» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի:

Աղյուսակ 6. Խմբերի համար համաթվի հաշվարկման արդյունքները՝ ըստ գործառույթների և ըստ բնագավառների (2018թ.)

Աղյուսակ 7. ՏԻՏԻ ցուցիչների գնահատումը՝ ըստ ՏԻ բնագավառների և գործառույթների

Գծապատկեր 1. Համաթվերի համեմատականն ըստ բնագավառների և ըստ խմբերի:

**Քարտեզ 1.** Վարչատարածքային բարեփոխումների երրորդ փուլում միավորված համայնքներ



# ԱՌԱՋԱԲԱՆ

Համայնքների կարողությունների ամրապնդման և ՏԻ համակարգի շարունակական զարգացման նպատակով՝ ՀՀ-ում իրականացվում են վարչատարածքային համակարգի բարեփոխումներ և համայնքների միավորում:

Միավորման արդյունքում կազմավորված նոր համայնքներն էականորեն տարբերվում են դեռևս չմիավորված համայնքներից իրենց մարդկային, ֆինանսական և ենթակառուցվածքային ռեսուրսներով և կարողություններով և լուրջ հնարավորություններ են ստեղծում ՀՀ ՏԻ համակարգում հետագա բարեփոխումների, մասնավորապես՝ ապակենտրոնացման իրականացման և տեղական ժողովրդավարության ամրապնդման համար:

Մինչ այժմ համայնքների միավորման գործընթացն իրականացվել է երեք փուլով. 1-ին փուլում՝ 2015 թվականին, միավորվել է 22 համայնք և ձևավորվել է 3 բազմաբնակավայր համայնք, 2-րդ փուլում՝ 2016 թվականին, միավորվել է 118 համայնք և ձևավորվել 15 բազմաբնակավայր համայնք, 3-րդ փուլում՝ 2017 թվականին միավորվել է 325 համայնք և ձևավորվել 34 բազմաբնակավայր համայնք:

2017 թվականի համայնքների միավորման արդյունքում Արագածոտնի մարզում ձևավորվել է 4 համայնք՝ Ապարան (21 բնակավայր), Ալագյազ (11 բնակավայր), Արագածավան (4 բնակավայր), Ծաղկահովիտ (10 բնակավայր), Գեղարքունիքի մարզում՝ 4 համայնք՝ Ճամբարակ (13 բնակավայր), Վարդենիս (4 բնակավայր), Գեղամասար (19 բնակավայր), Շողակաթ (6 բնակավայր), Լոռու մարզում՝ 10 համայնք՝ Ալավերդի (7 բնակավայր), Ախթալա (9 բնակավայր), Ստեփանավան (4 բնակավայր), Տաշիր (12 բնակավայր), Գյուլագարակ (7 բնակավայր), Լոռի Բերդ (9 բնակավայր), Մեծավան (4 բնակավայր), Շնող (3 բնակավայր), Սարչապետ (8 բնակավայր), Օձուն (9 բնակավայր), Կոտայքի մարզում՝ 6 համայնք՝ Բյուրեղավան (3 բնակավայր), Եղվարդ (6 բնակավայր), Չարենցավան (6 բնակավայր), Ակունք (8 բնակավայր), Մեղրաձոր (7 բնակավայր), Ջրվեժ (3 բնակավայր), Շիրակի մարզում՝ 3 համայնք՝ Անի (19 բնակավայր), Ախուրյան (8 բնակավայր), Մարմաշեն (16 բնակավայր), Սյունիքի մարզում՝ 3 համայնք՝ Կապան (38 բնակավայր), Սիսիան (32 բնակավայր), Քաջարան (21 բնակավայր), Վայոց Ձորի մարզում՝ 3 համայնք՝ Արենի (11 բնակավայր), Գլաձոր (3 բնակավայր), Եղեգիս (16 բնակավայր), Տավուշի մարզում՝ 1 համայնք՝ Բերդ (17 բնակավայր)[1]:

3-րդ փուլում միավորված համայնքները կազմում են մինչ այդ միավորման ենթարկված համայնքների շուրջ 70 %-ը:

Ի տարբերություն համայնքների միավորման 1-ին և 2-րդ փուլերի՝ 3-րդ փուլի վերաբերյալ ուսումնասիրություններ արված չեն: Սույն ուսումնասիրության նախաձեռնման պահին՝ դեռևս չկան վերլուծություններ ամենամեծաքանակ միավորման արդյունքների՝

[1] «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք 09.06.2017թ., ՀՕ-93-Ն օրենք

համայնքներում կառավարչական փոփոխությունների, ֆինանսական միջոցների բաշխման արդյունավետության, տեղական ժողովրդավարության դինամիկայի մասին:

Համայնքների միավորման 3-րդ փուլը նախորդներից տարբերվում է միավորման ենթարկված համայնքների աննախադեպ քանակով, ինչպես նաև փնջերի կազմման մոդելների բազմազանությամբ:

Միավորման 1-ին՝ պիլոտային, փուլում համայնքների միավորումն իրականացվել է արդեն առկա ներդրումային ծրագրերի հիման վրա: Միավորման 2-րդ փուլում համայնքների կարծիքներն առնվազն ֆորմալ կերպով հավաքագրվել են, և պահպանվել են սահմանված ընթացակարգերը: Հապճեպ և հիմնականում քաղաքական նպատակահարմարությամբ իրականացված միավորման 3-րդ փուլում անգամ ֆորմալ ընթացակարգերը ոչ միայն չեն պահպանվել, այլև խախտվել է Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայում ամրագրված՝ համայնքների բնակիչների կարծիքը լսելի լինելու իրավունքը:

1-ին և 2-րդ փուլի միավորված համայնքներին տրամադրվել է արտաքին ֆինանսական աջակցություն՝ անցումային դժվարությունները մեղմելու համար, իսկ միավորման հաջորդ փուլում համայնքները տիրապետել են առավելապես սեփական ռեսուրսների:

Համայնքների միավորման վերաբերյալ առկա դժգոհությունները պայմանավորված են համայնքային փնջերի կազմավորման մոդելների և դրանցում համայնքների ընդգրկման նպատակահարմարության վերաբերյալ փորձագիտական հիմնավորումների բացակայությամբ, ինչպես նաև որոշումների կայացման ոչ բավարար թափանցիկության, հրապարակայնության և մասնակցայնության պատճառներով:

Վարչատարածքային բարեփոխումները ՀՀ-ում շարունակվում են. միավորման գործընթացում դեռևս չի ընդգրկվել 450 համայնք, ինչը կազմում է մինչ բարեփոխումների մեկնարկը գոյություն ունեցող համայնքների (915 համայնք) գրեթե կեսը:

Վարչատարածքային բարեփոխումների հաջորդ փուլը պահանջելու է ավելի տևական և հիմնավոր նախապատրաստական աշխատանք, ինչը ենթադրում է վարչատարածքային բարեփոխումների նախորդ փուլերի արդյունքների ամփոփում, օպտիմալ փնջերի մոդելավորում՝ համայնքների միավորման տարբերակների բազմազանության քննարկմամբ: Ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել միավորված համայնքներում կառավարման արդյունավետությունը՝ փոփոխությունները, ձեռք բերած հաջողությունները, առաջացած դժվարությունները, միտումները, և բարելավել ՀՀ ՏԻ համակարգում ընթացող վարչատարածքային բարեփոխումների քաղաքականությունը:

«Մարդկային կապիտալի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի (ENI/2016/382-304) շրջանակներում 2019 թվականի հունվարից մինչև հունիս ժամանակահատվածում իրականացրել է «Վարչատարածքային բարեփոխումների երրորդ փուլում միավորված Արագածոտնի մարզի Ապարան, Ծաղկահովիտ, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Վարդենիս, Լոռու մարզի Ստեփանավան, Տաշիր, Գյուլագարակ, Կոտայքի մարզի Բյուրեղավան, Եղվարդ,

Մեղրաձոր, Չարենցավան, Շիրակի մարզի Անի, Ախուրյան, Մարմարաշեն, Սյունիքի մարզի Սիսիան, Վայոց Ձորի մարզի Արենի, Տավուշի մարզի Բերդ համայնքներում կառավարման արդյունավետության ուսումնասիրություն» ծրագիրը (ENI/2016/382-304-SG-29):

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է վարչատարածքային բարեփոխումների երրորդ փուլով կազմավորված 34 համայնքից 17 համայնքում:

Ընտրված համայնքներում իրականացվել է ՀՀ ՏԻ համակարգում ընթացող վարչատարածքային բարեփոխումների երրորդ փուլում տարբեր մոդելներով միավորված համայնքների կառավարման արդյունավետության ուսումնասիրություն և համեմատություն: Կատարվել է միավորման արդյունքների վերլուծություն և համայնքների կառավարման արդյունավետության չափելի գնահատում՝ պայմանավորված համայնքների միավորման մոդելով: Գնահատումը կատարվել է ինդեքսավորման՝ համաթվի հաշվարկման մեթոդով:

Համադրելով տարբեր մարզերում նույն ժամանակահատվածում նույնանման մոդելներով միավորված համայնքների սոցիալ-տնտեսական դինամիկան՝ ձեռքբերված ամփոփ տեղեկատվության համեմատական վերլուծության և չափելի գնահատման հիման վրա՝ փորձ է արվել պարզելու ՀՀ-ում տեղական ժողովրդավարության կայացման և համայնքների զարգացման համար միավորման առավել օպտիմալ մոդելը:

Վեր են հանվել միավորման գործընթացում առկա խնդիրներն ու ռիսկերը: Ուսումնասիրության արդյունում մշավել են ՀՀ ՏԻ ոլորտում իրականացվող համայնքների միավորման քաղաքականության բարելավման առաջարկներ՝ վարչատարածքային հետագա բարեփոխումներում միավորման գործընթացներն ավելի սահուն անցկացնելու նպատակով:

Ուսումնասիրության մեջ ներառվել են նաև ՏԻՄ-երի և վարչական ղեկավարների դիտարկումները, նկատառումները և առաջարկությունները՝ միավորված համայնքներում առկա փորձի հիման վրա:

ՀՀ Սահմանադրության, Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի, ՏԻ ոլորտի օրենսդրության և այլ օրենսդրական ակտերի պահանջների կատարման ուսումնասիրությամբ՝ պարզվել է միավորված համայնքներում տեղական ժողովրդավարության ամրապնդման դինամիկան և առաջարկներ են մշակել ՀՀ ՏԻ համակարգում տեղական ժողովրդավարության քաղաքականության բարելավման վերաբերյալ:

Սույն ուսումնասիրությամբ նպատակ չի դրվել՝ կատարելու միավորված և չմիավորված համայնքների համեմատություն կամ առանձին վերցրած համայնքներում միավորման արդյունքների վերլուծություն: Սույն ուսումնասիրությամբ իրականացվել է տարբեր մոդելներով միավորված համայնքների խմբերի կառավարման արդյունավետության վերլուծություն և առավել օպտիմալ միավորման մոդելի առանձնացում:

Ռսումնասիրությունը համայնքային կառավարման արդյունավետության մասին բազմաբնագավառ տեղեկատվություն է՝ հիմնված չափելի գնահատման վրա: Այն կարող է լիազոր մարմնի և ՔՀԿ-ների կողմից կիրառվել ՏԻՄ-երի գործունեության արդյունքների

ամենամյա համեմատության համար, իսկ ՏԻՄ-երի կողմից՝ համայնքային կառավարման բարելավման համար:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջազգային պրակտիկայում ընդունված կիրառում ունի ՏԻ մշտադիտարկումն ու գնահատումն ինդեքսավորման (համաթվի հաշվարկման) մեթոդով՝ ինչպես բոլոր համայնքների, այնպես էլ համայնքների առանձին խմբերի ընդգրկմամբ:

Ռուսմնասիրվող համայնքներում կառավարման արդյունավետության վերլուծությունն ու գնահատումը կատարվել է «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության հիման վրա[2]:

Հայաստանի ՏԻ տարեկան ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակված է ՏԻ բնագավառում միջազգային փորձի հիման վրա, և տեղայնացնված է ՀՀ ՏԻ համակարգում: Համակարգային բարեփոխումների վերլուծության և գնահատման համար հիմք են ընդունվել ուսումնասիրվող ժամանակահատվածում ՏԻՄ-երի գործունեության արդյունքները, ՏԻ համակարգի ընթացիկ վիճակը բնութագրող ֆինանսական և ոչ ֆինանսական մի շարք ցուցանիշների հաշվարկը և գնահատումը:

«Ինդեքսների (համաթվերի) օգտագործումը հնարավորություն է տալիս չափել ՏԻ համակարգի առանձին ուղղությունները՝ տվյալների հավաքագրման, ցուցիչների սահմանման, կշռման, գնահատման և վերջնական ինդեքսի հաշվարկման միջոցով: Իրականացվող հետազոտության նպատակները հաճախ պայմանավորում են նաև ինդեքսի հաշվարկման օբյեկտը՝ առանձին համայնքները կամ ՏԻ ամբողջ համակարգը:»[3]

Ընտրված մեթոդաբանության սկզբունքներին և ցուցիչների հաշվարկման չափանիշներին համապատասխան և ելնելով սույն ուսումնասիրության նպատակներից՝ ավելացվել են հետևյալ ցուցիչները՝

- Ցուցիչ 4. Օգտագործման տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի (վարելահող, խոտհարք, արոտ) տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ,
- Ցուցիչ 5. Բնակավայրերի ընդգրկվածությունը համայնքի զարգացման ծրագրերում,
- Ցուցիչ 6. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը 2018 թվականին,
- Ցուցիչ 12. Համայնքների բյուջեներում «կրթություն» բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով,
- Ցուցիչ 14. Համայնքների «սոցիալական պաշտպանություն» բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով (Ուսումնասիրվող համայնքներում սույն հոդվածով ծախսերը մեկ շնչի հաշվով կազմել են առավելագույնը 4.3$, նվազագույնը՝

[2] Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ) Մեթոդաբանություն, Երևան, Վան Արյան, 2017, ISBN 978-9939-70-221-6

[3] Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ) Մեթոդաբանություն, Երևան, Վան Արյան, 2017, ISBN 978-9939-70-221-6, էջ 6-7

0.1$: Հիմնվելով այս սահմանային արժեքների վրա՝ սահմանվել է համաթվի սանդղակ: Տես՝ Աղյուսակ 7),

- Ցուցիչ 22. Ավագանու մեկ տեղի համար առաջադրված 2 և ավելի թեկնածուներ ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ,
- Ցուցիչ 30. «Մեկ պատուհան» համայնքային կառավարման համակարգ ունեցող համայնքների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ:

Սույն ուսումնասիրությունն իրականավցվել է հետևյալ փուլերով՝

I. Վարչատարածքային բարեփոխումների երրորդ փուլով միավորված համայնքների բաժանում՝ ըստ միավորման մոդելների, և ուսումնասիրության ենթակա համայնքների առանձնացում:

Վարչատարածքային բարեփոխումների երրորդ փուլով միավորված համայնքները բաժանվել են չորս խմբի՝ պայմանավորված միավորման մոդելով.

- Առաջին խմբի միավորված համայնքներ՝ Նախկին վարչական շրջանի սահմաններում միավորված խամայնքներ,
- Երկրորդ խմբի միավորված համայնքներ՝ Նախկին շրջկենտրոնից կամ քաղաքային համայնքից և գյուղական համայնքներից կազմված համայնքներ, որտեղ գյուղական համայնքներն իրենց ենթակառուցվածքներով, բնակչության թվով հակակշռում են քաղաքային համայնքի գերակշիռ դիրքին,
- Երրորդ խմբի միավորված համայնքներ՝ Միայն գյուղական համայնքներնից կազմված համայնքներ,
- Չորրորդ խմբի միավորված համայնքներ՝ Քաղաքային համայնքից և գյուղական համայնքներից կազմված համայնքներ, որտեղ քաղաքային համայնքն իր ենթակառուցվածքներով, բնակչության թվով ունի գերակշիռ դիրք:

Համայնքների խմբավորումն ըստ միավորման մոդելների իրականացվել է միավորված համայնքներում ներառված բնակավայրերի՝ որպես վարչատարածքային միավորների, և դրանցում բնակչության թվաքանակի ուսումնասիրությամբ:

II. ՏԻ բնագավառների, գործառույթների և ցուցիչների ընտրություն՝ մոտարկելով ընտրված մեթոդաբանությունը սույն ուսումնասիրության նպատակներին:

Ընտրված համայնքներում միավորման ընթացիկ արդյունքների և կառավարման արդյունավետության ուսումնասիրությունն իրականացվել է ՏԻ հետևյալ բնագավառներում (ՏԻ ուղղություններ), որոնք ընդգրկում են համայնքների՝ օրենսդրությամբ սահմանված պարտադիր խնդիրները.

- Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ,
- Համայնքային սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ,
- Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում,
- Տեղական ժողովրդավարություն,
- Համայնքի կառավարում:

Նշված բնագավառներում սահմանվել է ՏԻ 11 գործառույթ և 30 ցուցիչ: ՏԻ գործառույթների համար սահմանված ցուցիչների քանակը պայմանավորված է ինչպես ՀՀ ՏԻ բնագավառում լուծման կարիք ունեցող հրատապ և գերակա խնդիրներով, այնպես էլ հրապարակված և/կամ հասանելի տեղեկատվության առկայությամբ:

III. Անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն:

Ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվությունը վերցվել է ՏԿԵՆ-ի, մարզպետարանների, համայնքների և այլ պետական մարմինների ՊՀԿ-երից (Տեղեկատվության հիմնական աղբյուրների ամբողջական ցանկը տես՝ էջ 54-57): Հրապարակման ենթակա տվյալների բացակայության, թերի ներկայացված լինելու կամ այլ աղբյուրներում դրանց անհամապատասխանության դեպքերում՝ կատարվել են ճշտումներ՝ համայնքներին ուղղված հարցման միջոցով և համայնքային այցելությունների ժամանակ՝ տեղերում:

Տվյալների հավաքագրման փուլում պարզվել է, որ պաշտոնական տեղեկատվական աղբյուրներում առկա տեղեկատվությունն առանձին դեպքերում բացակայում է կամ ամբողջական չէ, կամ ներկայացված է օգտագործման համար ոչ պիտանի ձևաչափով: Դա պայմանավորված է տեղեկատվության հավաքագրման, մշակման, գրանցման, դասակարգման և պահպանման միասնական մեթոդոլոգիայի բացակայությամբ:

ՏԻՄ-երի կողմից տեղեկատվության հավաքագրման, մշակման, գրանցման, դասակարգման, պահպանման և հրապարակման գործառույթը կանոնակարգված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 19 մարտի 2014 թվականի նիստի թիվ 11 արձանագրային որոշմամբ հաստատված «ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգ»-ով, ՀՀ կառավարության 15 հոկտեմբերի 2015 թվականի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 1204-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 26 դեկտեմբերի 2013 թվականի «Ինտերնետ ցանցում պետական մարմինների ՊՀԿ-երին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» թիվ 1521-Ն որոշմամբ, ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 8 ապրիլի 2015 «Համայնքային պաշտոնական համացանցային կայքերի վարման օրինակելի կարգ» թվականի թիվ 280-Ա հրամանի հիման վրա համայնքների ավագանիների կողմից հաստատված համայնքի ՊՀԿ-երի վարման կարգերով և այլ իրավական ակտերով:

Սույն ուսումնասիրությամբ նպատատակ չի դրվել՝ մշտադիտարկել և գնահատել ՊՀԿ-երի վիճակը: Զեկույցի շրջանակներում անդրադարձ չի կատարվել նկատված թերություններին ամբողջական ծավալով և չեն նշվել բացթողումները թույլ տված համայնքները, այլ արձանագրվել է սույն ուսումնասիրությանը վերաբերող տեղեկատվության պակասը:

IV. Ցուցիչների գնահատումը ըստ բնագավառների:

Աղյուսակ 7-ում ներկայացված է ՏԻՏԻ ցուցիչների գնահատումը՝ ըստ ՏԻ բնագավառների և գործառույթների:

V. Համայնքների խմբերի տարեկան համաթվերի հաշվարկում:

ՏԻ տարեկան համաթիվը հաշվարկվել է համայնքների խմբերի համար՝ ըստ առանձին բնագավառների, և ներկայացվում է բնագավառների համաթվերի հանրագումարով:

Ուսումնասիրության արդյունքում ստացված՝ համայնքների խմբերի տարեկան համաթվերը համադրելով՝ որոշվել է առավել արդյունավետ միավորման մոդելը՝ ըստ բնագավառների և դրանց հանրագումարով:

Սույն ուսումնասիրության ընթացիկ արդյունքների շուրջ կազմակերպվել են հաղիպում-քննարկումներ համայնքներում, որոնց արդյունքներով համալրված զեկույցը ներկայացվել է հանրային քննարկման:

## ԲՆԱԳԱՎԱՌ 1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Բնագավառը բնորոշում է «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններից հետո ստեղծված իրավիճակը։

«Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ» բնագավառում հաշվարկված համաթիվն առավելագույնն է համայնքների երկրորդ խմբում, նվազագույնը՝ առաջին խմբում։

**Գործառույթ 1. Վարչատարածքային բարեփոխումներ։**

Համայնքի բնակչության թիվը և վարչական տարածքի մեծությունն ազդում են ՏԻՄ-երի կողմից վարվող քաղաքականության, ընդունվող որոշումների, մասնավորապես՝ ծրագրերի իրականացման առաջնայնությունների վրա, և միավորված համայնքների համար կարող են համարվել նպաստավոր կամ ոչ նպաստավոր մեկնարկային պայման։

Այս տեսակետից ուսումնասիրվող չորս խմբերից առավել նպաստավոր մեկնարկային պայմաններ ունի համայնքների երկրորդ խումբը, իսկ վատագույն՝ համայնքների առաջին խումբը։

**Ցուցիչ 1.** Մեկ համայնքի բնակչության միջին թիվը խմբում։

Համայնքի բնակչության թվի վերաբերյալ տեղեկատվությունում առկա են բազմաթիվ անհամապատասխանություններ։ Մասնավորապես՝ ուսումնասիրված տարբեր ՊՀԿ-երում նույն համայնքի բնակչության թվի վերաբերյալ տեղեկատվությունը տարբեր է, ավելին՝ համայնքների ՊՀԿ-երի առանձին տիրույթներում կարող են նշված լինել իրարից տարբերվող թվեր։ Համայնքների ՊՀԿ-երում տեղեկատվությունը ներկայացված է բնակչության հաշվարկման երկու կատեգորիայով՝ «առկա բնակչություն» և «մշտական բնակչություն»։

Համայնքի բնակչության թիվը բազային ցուցանիշ է համայնքին արդյունավետ կառավարման համար, այն է՝ ռազմավարական և ընթացիկ ծրագրերի, բյուջետային գործընթացների, համայնքային ծառայությունների մատուցման պլանավորման և իրականացման, ինչպես նաև տեղական մակարդակում կոռուպցիայի կանխարգելման համար։

**Ցուցիչ 2.** Մեկ համայնքի վարչական տարածքի միջին չափը խմբում։

Ցուցիչ 1–ը և սույն ցուցիչը ելակետային են։ Համայնքի վարչական տարածքը ձևավորվում է վարչատարածքային բաժանման արդյունքում և անուղղակիորեն ազդում է համայնքի կառավարման արդյունավետության վրա։

### Առաջարկություններ.

**ՏԻՄ-երին առաջարկվում է** ևս մեկ անգամ անդրադառնալ համայնքի վարչական տարածքի չափի վերաբերյալ տեղեկատվությանը, քանի որ որոշ համայնքների կողմից

հրապարակված տեղեկատվության մեջ նոր ձևավորված համայնքի ընդհանուր վարչական տարածքը հավասար չէ մինչ միավորումը համայնքների տարածքների հանրագումարին:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** հետագա միավորման մոդելներ մշակելիս՝ ստացվող փնջերում ուշադրություն դարձնել «բնակչության թիվ» և «վարչական տարածք» համադրությանը՝ նախապատվություն տալով «Նախկին շրջկենտրոնից կամ քաղաքային համայնքից և գյուղական համայնքներից կազմված համայնքներ, որտեղ գյուղական համայնքներն իրենց ենթակառուցվածքներով, բնակչության թվով հակակշռում են քաղաքային համայնքի գերակշիռ դիրքին» մոդելին:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** որպես համայնքի բնակչության թիվ սահմանել բնակչության հաշվառումը վարող լիազոր մարմնից՝ սահմանված կարգով[4] ստացված՝ յուրաքանչյուր համայնքիբնակչության ռեգիստրում հաշվառված անձանց թվաքանակի վերաբերյալ տվյալները:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** նախաձեռնել իրավական կարգավորումներ, ինչը հնարավորություն կտա ՏԻՄ-երին՝ սահմանային կառավարման էլեկտրոնային համակարգից որոշակի պարբերականությամբ ստանալ տեղեկատվություն ՀՀ-ից բացակայող և ՀՀ վերադարձող համայնքի բնակչության թվաքանակի վերաբերյալ:

ՏԻՄ-երի ներկայացուցիչների հետ համայնքային հանդիպում-քննարկումների արդյունքներով՝ **լիազոր մարմնին առաջարկվում է** միավորման գործընթացն ավարտելուց հետո իրականացնել համընդհանուր քարտեզագրում՝ նոր ձևավորված համայնքների վարչական սահմանները ճշգրտելու նպատակով:

Աղյուսակ 1-ում ներկայացված են մեկ համայնքի բնակչության միջին թիվը և մեկ համայնքի վարչական տարածքի միջին չափը՝ ըստ խմբերի (էջ 13):

[4] ՀՀ կառավարության 06.03.2014թ. թիվ 214-Ա որոշում «ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու մասին»

Աղյուսակ 1. Մեկ համայնքի բնակչության միջին թիվը և մեկ համայնքի վարչական տարածքի միջին չափը՝ ըստ խմբերի

| Բնագավառ / Գործառույթ / Ցուցիչ | 1-ին խումբ | 2-րդ խումբ | 3-րդ խումբ | 4-րդ խումբ |
|---|---|---|---|---|
| | ցուցիչի արժեք / համաթիվ | | | |
| Բնագավառ 1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ | | | | |
| Գործառույթ 1. Վարչատարածքային բարեփոխումներ | | | | |
| Ցուցիչ 1. Մեկ համայնքի բնակչության միջին թիվը խմբում (մարդ) | 27359 | 17802 | 9549 | 21454 |
| | 7 | 10 | 8 | 9 |
| Ցուցիչ 2. Մեկ համայնքի վարչական տարածքի միջին չափը խմբում (կմ$^2$) | 758.29 | 310.02 | 287.44 | 113.94 |
| | 6 | 10 | 10 | 7 |

## ԲՆԱԳԱՎԱՌ 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Սույն բնագավառը բնորոշում է միավորման արդյունքում համայնքներում առկա ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների՝ ՏԻՄ-երի կողմից տիրապետման և օգտագործման արդյունավետությունը, սույն ուսումնասիրության դեպքում՝ նաև 2018 թվականին իրականացրած փաստացի գործունեությունը: Որպես համայնքների տարեկան գործունեության բնութագրիչներ վերցվել են 2018 թվականի բյուջետային եկամտային և ծախսային որոշ հոդվածների առավել բնորոշ ցուցանիշները, իսկ ոչ ֆինանսական ակտիվների մասով՝ նրանց օգտագործման արդյունավետությունը:

Համայնքի սեփականություն, գույք, զարգացման ծրագրեր բնագավառում հաշվարկված համաթիվն առավելագույնն է համայնքների երկրորդ խմբում, նվազագույնը՝ առաջին խմբում:

**Գործառույթ 2. Համայնքի սեփականություն, գույք:**

Համայնքային սեփականության գերակշիռ մասը կառուցվել կամ ձեռք է բերվել խորհրդային ժամանակաշրջանում, տարիների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական և բարոյական մաշվածության, և հիմնական մասը հիմնանորոգման կամ նորացման կարիք ունի:

**Ցուցիչ 3.** Համայնքների բյուջեների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում:

Տվյալ ցուցիչը բնորոշում է համայնքների հիմնական միջոցների նորոգմանն ու նորացմանն ուղղվող միջոցների տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում:

**Ցուցիչ 4.** Օգտագործման տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի (վարելահող, խոտհարք, արոտ) տեսակարար կշիռը:

Բոլոր համայնքների պաշտոնական աղբյուրներում ոչ ֆինանսական ակտիվների մասով առկա տեղեկատվությունը չափազանց թերի է, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող որոշ տեսակի գույքի մասին տեղեկատվությունը բացակայում է ընդհանրապես:

Ի սկզբանե նախատեսվում էր ուսումնասիրել համայնքի կողմից տիրապետվող ամբողջ գույքի, այն է՝ շենք-շինություններ, փոխադրամիջոցներ, հողեր և այլն, օգտագործման արդյունավետությունը, այդ նպատակով սահմանվել էր «Համայնքի կողմից չօգտագործվող և օգտագործման տրամադրված համայնքի սեփականություն հասդիսացող գույքի տեսակարար կշիռը» ցուցիչը: Սակայն պաշտոնական աղբյուրներում առկա ոչ ամբողջական, որոշ դեպքերում ընդհանրապես բացակայող տեղեկատվության, նաև լրացուցիչ գրավոր հարցումների պատասխաններում ոչ բավարար տեղեկատվության պատճառով, ինչպես նաև համայնքային այցելությունների արդյունքում որոշվել է ուսումնասիրել միայն համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական

նշանակության հողերի օգտագործման արդյունավետությունը, քանի որ վերոնշյալ ցուցիչի հիմք հանդիսացող հողային հաշվեկշիռն առկա էր ուսումնասիրվող համայնքներում:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վերբերյալ տվյալների արժանահավատության մակարդակը բարձր է, քանի որ համայնքի հողային հաշվեկշիռը համայնձայնեցվում է ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանման հետ՝ համաձայն ՀՀ կառավարության 23 հոկտեմբերի 2000 թվականի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման:

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է նաև, որ ի խախտումն ՏԻՄ օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման՝ համայնքների գերակշիռ մասում հողային հաշվեկշիռը կա՛մ չի ներկայացվում ավագանու հաստատման, կա՛մ ներկայացվում է ավագանու հաստատմանը, սակայն չի տեղադրվում համայնքային ՊՀԿ-երում: Գերակշիռ դեպքերում չի ապահովվում համայնքի ղեկավարի կողմից համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրն ավագանուն ներկայացնելու ՏԻՄ օրենքի հոդված 56-ի պահանջը:

ՏԻՄ օրենքի 42-րդ հոդվածով սահմանված է ամեն տարի ավագանու կողմից համայնքային սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատման պահանջ, սակայն հաստատման ձևաչափի վերաբերյալ իրավական ակտ գոյություն չունի և համայնքներն այն իրականացնում են սեփական հայեցողությամբ: Համայնքի ղեկավարի կողմից ներկայացվող գույքագրման փաստաթղթերի ձևաչափի վերաբերյալ իրավական ակտ գոյություն չունի: Տարբեր համայնքներում այս փաստաթուղթը ներկայացվում է տարբեր ձևաչափերով:

**Գործառույթ 3. Համայնքի զարգացման ծրագրեր և բյուջե (պլանավորում և բյուջետավարում):**

Սույն գործառույթը բնութագրում է ՀՀԶԾ-երում 2018 թվականի համար նախատեսված ծրագրերի փաստացի իրականացումը:

Ուսումնասիրության նպատակին համապատասխան՝ նախատեսվել էր համադրել 2018 թվականին կատարած փաստացի աշխատանքները ՀՀԶԾ-երով նախատեսված աշխատանքների հետ: ՀՀԶԾ-երում և 2018 թվականին փաստացի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններում առկա էի բազմաթիվ թերություններ: Մասնավորապես՝ ՀՀԶԾ-երում նախատեսված էին ծրագրեր, որոնք դուրս էին օրենսդրությամբ սահմանված՝ ՏԻՄ-երի լիազորություններից, որոշ ծրագրերի համար բացակայում էին ժամկետային և գումարային ցուցանիշները: 2018 թվականի կատարած փաստացի մի շարք աշխատանքներ նախատեսված չեն եղել ՀՀԶԾ-երով, և հակառակը՝ ՀՀԶԾ-երով նախատեսված որոշ ծրագրեր 2018 թվականին չեն իրականացվել: Վերոնշյալ փաստաթղթերում առկա էին բազմաթիվ գումարային և ժամկետային անհամապատասխանություններ:

Համայնքի զարգացման պլանավորումը ՏԻ կայացման և զարգացման կարևոր գործիք է: ՀՀԶԾ-ը, որպես համայնքի զարգացման միջնաժամկետ պլանավորման կարևոր

փաստաթուղթ, պետք է ծրագրային հիմք հանդիսանա տարեկան բյուջեների կազմման համար: Հաշվի առնելով համայնքում ծրագրային բյուջետավարման ներդրման անհրաժեշտությունը՝ ՀՀԶԾ-ի հիման վրա մշակված ՏԱՊ-ը բյուջեի ծրագրային ձևաչափով կազմելու հիմքն է: Այն կնպաստի համայնքում աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը և իրականացմանը:

Ուսումնասիրվող համայնքներում միջնաժամկետ և տարեկան պլանավորման կապը թույլ է արտահայտված:

Ուսումնասիրվող համայնքներում ՏԻՄ օրենքի 82-րդ և 91-րդ հոդվածներով սահմանված պահանջների համաձայն՝ հրապարակման ենթակա ֆինանսական փաստաթղթերը, մասնավորապես՝ հաստատված բյուջեները և նրանում կատարվող փոփոխությունները, համայնքի բյուջեի կատարման եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, տեղադրված են համայնքների ՊՀԿ-երում ամբողջությամբ: Ի հակադրումն վերը նշվածի՝ առանձին համայնքներ չեն հրապարակել ՀՀԶԾ-ները, իսկ հրապարակվածները չեն համապատասխանում լիազոր մարմնի կողմից առաջարկվող ձևաչափին:

**Ցուցիչ 5.** Բնակավայրերի ընդգրկվածությունը համայնքի զարգացման ծրագրերում Բոլոր համայնքների ՀՀԶԾ-երում բնակավայրերի շահերը ներկայացված են:

Սույն ցուցիչը հաշվարկվել է՝ համադրելով ՀՀԶԾ-երում ընդգրկված բնակավայրերի թիվը համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի ընդհանուր թվի հետ:

**Ցուցիչ 6.** Համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը 2018 թվականին:

Ուսումնասիրված բոլոր համայնքներում ՀՀԶԾ-երը կազմված են՝ համաձայն ՏԻՄ օրենքի 82-րդ հոդվածով սահմանված պահանջի:

2018 թվականին ՏԻՄ-երի կողմից փաստացի կատարված աշխատանքների վերաբերյալ հրապարակված հաշվետվությունները կրում են նկարագրական բնույթ: Կատարված աշխատանքների ներկայացման մեջ հղում չկա ՀՀԶԾ-ի համապատասխան ծրագրերին, ինչպես նաև տրված չեն քանակական և որակական գնահատականներ տարեկան աշխատանքներին:

ՏԻՄ-երի կողմից 2018 թվականին փաստացի կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները թերի են. ամբողջական ներկայացված չեն կատարված աշխատանքների ծավալը, դրանց համար ծախսված գումարի, աշխատանքների տևողության, կապալառու կազմակերպության վերաբերյալ տվյալները և ստացված արդյունքների քանակական և որակական ցուցանիշները: Ըստ էության՝ գործող իրավական ակտերով ՏԻՄ-երին նման պահանջ առաջադրված չէ:

Սույն ցուցիչը հաշվարկվել է՝ համադրելով ՀՀԶԾ-ներում 2018 թվականի համար նախատեսված աշխատանքների քանակը 2018 թվականին վերոնշյալ աշխատանքներից փաստացի կատարվածների քանակի հետ:

**Գործառույթ 4. Համայնքի բյուջետային եկամուտներ և ծախսեր:**

Համայնքների ֆինանսական ապահովվածության կարևոր հարաբերական ցուցանիշներից են բնակչության մեկ շնչին բաժին ընկնող՝ համայնքների բյուջեների եկամուտը և ծախսը:

Բոլոր համայնքների տարեկան բյուջեներն օրենքով սահմանված ձևաչափով և պատշաճ կերպով հրապարակված են: Բյուջետային ցուցանիշները պաշտոնական տեղեկատվական աղբյուրներում լիարժեքորեն ներկայացված են, ֆինանսական ցուցիչների մասով համաթվերի հաշվարկը որևէ բարդություն չի հարուցել:

**Ցուցիչ 7.** Համայնքների բյուջեների եկամուտների հանրագումարի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ:

Հաշվի առնելով, որ համայնքապատկան գույքը համայնքներում ամբողջական հաշվառված չէ, սեփական եկամուտների մուտքային մասի պլանավորումը թերի է: Սեփական եկամուտների հնարավոր ողջ ծավալը ներառված չէ տարեկան առաջադրանքի մեջ, և այս պայմաններում սեփական մուտքերի բարձր կատարողականը պայմանավորված է նաև թերի պլանավորմամբ: Համայնքում գույքի լիարժեք հաշվառումը ՏԻՄ-երի կողմից սեփական եկամուտների իրական պլանավորման հիմքն է:

**Ցուցիչ 8.** Համայնքների բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով:

Համայնքների միավորումից հետո համայնքների բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով չի փոխվել, քանի որ համայնքների սեփական եկամուտների ստացման բազան և համայնքներին հատկացվող դոտացիաների հաշվարկման կարգը մնացել են նույնը: Հետևաբար՝ միավորված համայնքների ընդհանուր եկամուտները հավասար են մինչ միավորումը համայնքների եկամուտների հանրագումարին: Վարչատարածքային բարեփոխումներից հետո համայնքների մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների փաստացի եկամուտի տեսակետից բարելավում չի եղել:

**Ցուցիչ 9.** Համայնքների բյուջեների սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (համայնքների ֆինանսական անկախությունը կամ ինքնուրույնությունը):

Ցուցիչը բնութագրում է համայնքի ֆինանսական անկախությունը, ինքնուրույնությունը: Վարչատարածքային բարեփոխումը ենթադրում է համայնքների ֆինանսական անկախության ավելացում, որը տեղի չի ունեցել, և համայնքների միավորումից հետո այս ցուցանիշը շարունակում է մնալ բավականին ցածր:

Համայնքի եկամուտների ոչ բավարար մակարդակը պայմանավորված է նաև վատ պլանավորմամբ: Եկամուտների պլանավորման համար միասնական կարգ օրենսդրորեն սահմանված չէ, ՏԻՄ-երը պլանավորումը կատարում են սեփական հայեցողությամբ:

**Գործառույթ 5. ՏԻՄ-երի լիազորությունների և ֆինանսների համապատասխանություն:**

Գործառույթը բնութագրում է ՏԻՄ-երի լիազորությունների և ֆինանսների համապատասխանությունը:

**Ցուցիչ 10.** Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերում:

Սույն ցուցիչի մասով երրորդ խմբի ցածր համաթիվն առավելապես պայմանավորված է համայնքի բոլոր բնակավայրերում վարչական ղեկավար ունենալու օրենսդրական պահանջով [5] ։ Բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայրում մեկ վարչական ղեկավար ունենալու օրենսդրությամբ սահմանված դրույթը վերանայման անհրաժեշտություն ունի:

## Առաջարկություններ.

**Լիազոր մարմնին առաջարկվում է** մշակել և ներդնել համայնքի ֆինանսական ցուցանիշների սահմանման, մշտադիտարկման և գնահատման միասնական համակարգ՝ ապահովելով պահանջվող տեղեկատվության հասանելիությունը, մատչելիությունը և պարբերական թարմացումը:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** մշակել և ընդունել օրենսդրական փոփոխություններ՝ համայնքի ֆինանսական ցուցանիշների արտաքին փորձագիտական գնահատում իրականացնելու նպատակով:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** մշակել և ընդունել օրենսդրական փոփոխություններ՝ համայնքների բյուջեների մուտքերի կայունության և բազմազանության ապահովման և համայնքների ֆինանսական կարողությունների զարգացման նպատակով:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** մշակել և առաջարկել ՏԻՄ-երին համայնքային գույքի միասնական հաշվառման կարգ և հրապարակման չափորոշիչներ սահմանող իրավական ակտ:

**ՏԻՄ-երին առաջարկվում է** համայնքին վերաբերող ռազմավարական ծրագրերը կազմել օրենսդրությամբ սահմանված՝ ՏԻՄ-ների լիազորությունների շրջանակում, ՏԿԵՆ կողմից մշակված ՀՀԶԾ-երի ձևաչափով, կատարվող ծրագրերի ժամկետների և անհրաժեշտ գումարային ցուցանիշների պարտադիր ներառմամբ:

**ՏԻՄ-երին առաջարկվում է** համայնքների ՊՀԿ-երում զարգացման ծրագրերին վերաբերող տեղեկատվությունը հրապարակել ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** մշակել և ներդնել ՀՀԶԾ-երի և ՏԱՊ-երի մշտադիտարկման և գնահատման ընթացակարգեր և մեթոդական ուղեցույցեր:

**ՏԻՄ-երին առաջարկվում է** փաստացի կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններում կատարել համապատասխան հղումներ ՀՀԶԾ-երին, այլ ռազմավարական ծրագրերին և ավագանու համապատասխան որոշումներին:

---

[5] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 07.05.2002թ., ՀՕ-337, Հոդված 31 (16.01.2018, ՀՕ-66- Ն փոփոխություններով)

**ՏԻՄ-երին առաջարկվում է** ՀՀԶԾ-երը կազմելիս՝ զերծ մնալ համայնքի լիազորություններից չբխող ներդրումային ծրագրեր ներառելուց, մասնավորապես՝ ոչ համայնքային կազմակերպություններին, ֆիզիկական անձանց պատկանող շենքշինությունների և այլ գույքի նորոգում, կառուցում կամ ձեռքբերում: Ծայրահեղ անհրաժեշտությունից ելնելով՝ նման ներդրումների դեպքում՝ **ՏԻՄ-երին առաջարկվում է** պահանջել և ստանալ համապատասխան կազմակերպություններից ներդրումներին համարժեք հատուցում՝ շահաբաժին, գույքի համասեփականություն կամ բնակիչների համար ապրանքների և ծառայությունների գների մեղմացում:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** մշակել և ներդնել համայնքներում ՏԻՄ-երի կողմից փաստացի իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունների կազմման ձևաչափ, որը կներառի տեղեկատվություն կատարված աշխատանքների ծավալի, դրանց համար ծախսված գումարի, աշխատանքների տևողության, ստացված արդյունքների քանակական և որակական ցուցանիշների և կապալառու կազմակերպությունների վերաբերյալ:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** ձեռնարկել օրենսդրական բարելավումներ՝ համայնքի համախառն եկամուտների ծավալում սեփական եկամուտների հետևողական ավելացում ապահովելու նպատակով:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** մշակել և ներդնել օրենսդրական կարգավորումներ, որոնք կնպաստեն համայնքների բյուջեների սեփական եկամուտների գանձման մակարդակի և ծախսերի կատարման արդյունավետության բարձրացմանը:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ՝ հանելով յուրաքանչյուր բնակավայրում մեկ վարչական ղեկավար ունենալու պահանջը և համայնքի ավագանուն լիազորություն վերապահելով ինքնուրույն որոշելու բնակավայրերում վարչական ղեկավար ունենալու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը՝ կախված բնակավայրերում ենթակառուցվածքների առկայությունից, բնակավայրերի աշխարհագրական դիրքից, բնակիչների թվից:

Աղյուսակ 2-ում ներկայացված են «Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի (էջ 20):

Աղյուսակ 2. «Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համարթվերը՝ ըստ խմբերի:

| Բնագավառ / Գործառույթ / Ցուցիչ | 1-ին խումբ | 2-րդ խումբ | 3-րդ խումբ | 4-րդ խումբ |
|---|---|---|---|---|
| | ցուցիչի արժեք / համարթիվ | | | |
| Բնագավառ 2. Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ | | | | |
| Գործառույթ 2. Համայնքի սեփականություն | | | | |
| Ցուցիչ 3. Համայնքների բյուջեների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում(%) | 13.3 | 16.9 | 21.1 | 12.1 |
| | 3 | 4 | 5 | 3 |
| Ցուցիչ 4. Օգտագործման տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի (վարելահող, խոտհարք, արոտ) տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%) | 7.8 | 22.3 | 22.1 | 23.5 |
| | 1 | 3 | 3 | 3 |
| Գործառույթ 3. Համայնքի զարգացման ծրագրեր և բյուջե (պլանավորում և բյուջետավարում) | | | | |
| Ցուցիչ 5. Բնակավայրերի ընդգրկվածությունը համայնքի զարգացման ծրագրերում (%) | 100 | 100 | 100 | 100 |
| | 10 | 10 | 10 | 10 |
| Ցուցիչ 6. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը 2018 թվականին (%) | 35.2 | 27.8 | 52.0 | 34.2 |
| | 3 | 2 | 5 | 3 |
| Գործառույթ 4. Համայնքի բյուջետային եկամուտներ և ծախսեր | | | | |
| Ցուցիչ 7. Համայնքների բյուջեների եկամուտների հանրագումարի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ (%) | 95.8 | 99.9 | 95.3 | 96.0 |
| | 8 | 9 | 8 | 8 |
| Ցուցիչ 8. Համայնքների բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 59.83 | 61.71 | 53.08 | 60.28 |
| | 2 | 2 | 2 | 2 |
| Ցուցիչ 9. Համայնքների բյուջեների սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (համայնքների ֆինանսական անկախությունը կամ ինքնուրույնությունը) (%) | 27.97 | 34.58 | 28.45 | 32.70 |
| | 3 | 4 | 3 | 4 |
| Գործառույթ 5. ՏԻՄ-երի լիազորությունների և ֆինանսների համապատասխանություն | | | | |
| Ցուցիչ 10. Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերում (%) | 32.7 | 28.3 | 54.6 | 26.9 |
| | 4 | 5 | 1 | 5 |

## ԲՆԱԳԱՎԱՌ 3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ (ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

Սույն ուսումնասիրության շրջանակներում համայնքային ծառայությունները դիտարկվել են միավորված համայնքների բոլոր բնակիչներին ծառայությունների հասանելիության տեսանկյունից. արդյոք օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում բոլոր ծառայություններն են մատուցվում, և որքանով են դրանք հասանելի համայնքների բոլոր բնակավայրերի բնակիչներին: Նպատակ չի դրվել ուսումնասիրել համայնքների կողմից մատուցվող ծառայությունների որակը, ծառայություններից քաղաքացիների բավարարվածության աստիճանը և այլն:

Միավորված համայնքների բնակիչներին համայնքային ծառայությունների հասանելիության վերլուծության համար հիմք է հանդիսացել ՊՀԿ-երում առկա տեղեկատվությունը: Ի սկզբանե սահմանվել էր համադրել մատուցվող ծառայություններից օգտվող համայնքի բնակչության թիվը համայնքի ընդհանուր բնակչության թվի հետ կամ այդ ծառայության շահառուների թվի հետ: Սակայն այս եղանակով հնարավոր եղավ տեղեկատվություն ստանալ միայն թիվ 11 ցուցիչի՝ «նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների տեսակարար կշիռը նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ», համաթվի հաշվարկի համար, ընդ որում՝ ոչ բոլոր համայնքների ՊՀԿ-երից. տեղեկատվությունը համալրվել է նաև հարցումների միջոցով: Համայնքային այլ ծառայությունների մասով՝ ծառայության շահառուների թվի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Վերլուծության համար հիմք է հանդիսացել բյուջեների՝ ըստ գործառնական դասակարգման ծախսերի հաշվետվություններում առկա տեղեկատվությունը:

Ի սկզբանե պլանավորված «Խմելու ջրի ներքին ցանց ունեցող բնակավայրերի տեսակարար կշիռը համայնքի բնակավայրերի բնակավայրերի ընդհանուր թվի մեջ» և «Անասնաբուժական և բուսասանիտարիայի ծառայություններ ստացող բնակավայրերի տեսակարար կշիռը համայնքների բնակավայրերի ընդհանուր թվի մեջ» ցուցիչների մասով համաթիվ չի հաշվարկվել, քանի որ տվյալ ծառայությունները մատուցվում են ոչ միայն համայնքների կողմից:

«Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում» բնագավառում հաշվարկված համաթիվն առավելագույնն է համայնքների երկրորդ խմբում, նվազագույնը՝ երրորդ խմբում:

Սույն արդյունքը նաև տրամաբանական է, քանի որ քաղաքային կամ շրջկենտրոն համայնքները ծառայության մատուցման տեսակետից արդեն իսկ կուտակել են ավելի մեծ կարողություն և փորձ: Համայնքների միավորումից հետո բացի շրջկենտրոն բնակավայրի սպասարկումից ծառայությունների մատուցումը տարածվել է նաև գյուղական բնակավայրեր: Ամենացածր համաթիվն ունի միայն գյուղական համայնքներից կազմված խումբը: Համայնքների միավորումը դրականորեն է անդրադառնում ծառայությունների մատուցումը գյուղական համայնքներ հասցնելու տեսակետից, եթե բնջում կան նախկին քաղաքային կամ շրջկենտրոն համայնքներ:

**Գործառույթ 6. Սոցիալական ուղղվածություն ունեցող ծառայություններ (կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն և այլն):**

Սույն գործառույթը բնութագրում է սոցիալական ուղղվածություն ունեցող ծախսերի բաշխումն ըստ ոլորտների:

**Ցուցիչ 11.** Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների տեսակարար կշիռը նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ:

Նախադպրոցական կրթության իրավունք ունեցող երեխաների թվաքանակի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը համայնքների ՊՀԿ-երում թերի էր կամ բացակայում էր:

Հաշվարկվել է համայնքային ենթակայության կազմակերպություններում նախադպրոցական կրթություն ստացող երեխաների տեսակարար կշիռը 2018 թվականի համար: Այս ցուցիչը բնութագրում է համայնքներում առկա վիճակը և կարող է որպես ուղեցույց հանդիսանալ ՏԻՄ-երի համար՝ հետագայում ոլորտային քաղաքականության մշակման և առաջնահերթությունների սահմանման համար:

**Ցուցիչ 12.** Համայնքների բյուջեներում «կրթություն» բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով:

ՏԻՄ-երի ներկայացուցիչների հետ համայնքային քննարկումների ընթացքում պարզվել է, որ համայնքների գերակշիռ մեծամասնությունում վարվող ոլորտային քաղաքականությունը միտված է բոլոր բնակավայրերում նախակրթական ուսումնական հաստատությունները պահպանելուն: Արդյունքում՝ փոքր բնակավայրերում թերբեռնված նախակրթական ուսումնական հաստատություններ պահպանելու ցանկության և սահմանված պարտադիր հաստիքներ ունենալու պահանջի առկայության պայմաններում[6]՝ համայնքի կողմից կատարվում են ոչ արդյունավետ ծախսեր:

**Ցուցիչ 13.** Համայնքների բյուջեներում «հանգիստ, մշակույթ և կրոն» բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով:

Ցուցիչի արժեքները վերցվել են բյուջեների համապատասխան ծախսային հոդվածներից:

**Ցուցիչ 14.** Համայնքների «սոցիալական պաշտպանություն» բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով:

Համայնքներում «սոցիալական պաշտպանության» բնագավառի քաղաքականությունն իրականացվում է պետական լիազոր մարմինների միջոցով և ներառում է սոցիալական ծառայությունների մատուցման ողջ շրջանակը: Համայնքային քննարկումների ընթացքում ՏԻՄ-երի ներկայացուցիչների կողմից փաստվել է, որ տվյալ հոդվածով կատարվող ծախսերն անարդյունավետ են: Դրամական աջակցության տրամադրման չափորոշիչները կա՛մ սահմանված չեն համայնքների ավագանու կողմից, կա՛մ սահմանվածները

[6] ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. թիվ 29-Ն հրաման «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին»

հայեցողական որոշումներ կայացնելու հնարավորություն են տալիս: Հետևաբար՝ գործընթացը պարունակում է նաև կոռուպցիոն ռիսկեր:

ՏԻՄ օրենքով տվյալ ոլորտում համայնքին վերապահված լիազորությունն առավել արդյունավետ է կիրառել արտակարգ իրավիճակների կամ այնպիսի դեպքերի համար, որոնք պահանջում են արագ արձագանքում և ներառված չեն պետական սոցիալական քաղաքականության ծրագրերում:

**Ցուցիչ 15.** Համայնքի գլխավոր հատակագիծ ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ:

Համայնքի գլխավոր հատակագիծը համայնքի երկարաժամկետ զարգացման պլանավորման կարևոր փաստաթուղթ է, հետևաբար գլխավոր հատակագծի առկայությունը պարտադիր պայման է համայնքի արդյունավետ կառավարումն իրականացնելու համար: Գլխավոր հատակագծի նախագծումը, պատրաստումը, հաստատումը տևական գործընթաց է, որը պահանջում է նաև համայնքների համար էական ֆինանսական ծախսեր:

**Ցուցիչ 16.** Աղբահանության ծառայություն ստացող բնակավայրերի տեսակարար կշիռը բնակավայրերի ընդհանուր թվի մեջ:

Համայնքների միավորման նպատակներից է աղբահանության ծառայությունը հասանելի դարձնելը համայնքների բոլոր բնակավայրերի համար: Չմիավորված փոքր համայնքները տվյալ ծառայության մատուցման համար չունեն բավարար ֆինանսական ռեսուրսներ և տեխնիկական հնարավորություններ:

Սույն ցուցիչն արտացոլում է ՏԻՄ-երի հանձնառությունը՝ աղբահանության ծառայությունը մատուցել բոլոր բնակավայրերում: Այս ծառայությունը բացառիկ է իր հետևանքային լինելով, և պետք է լինի համայնքի առաջնահերթությունների մեջ:

Սույն ցուցիչը հաշվարկվել է համայնքի բոլոր բնակավայրերի և աղբահանություն ստացող բնակավայրերի թվի համադրումով:

**Ցուցիչ 17.** Համայնքի ներբնակավայրային փողոցներից լուսավորության ծառայության ցանցում ընդգրկված փողոցների տեսակարար կշիռը:

Համայնքային փողոցների քանակի կամ ընդհանուր երկարության վերաբերյալ տեղեկատվությունը համայնքների ՊՀԿ-երում բացակայում է: Անհրաժեշտ տեղեկատվությունն ստացվել է համայնքների աշխատակազմերից՝ հարցման միջոցով:

Համայքների միավորումից հետո ներբնակավայրային և միջբնակավայրային փողոցները հանդիսանում են ներհամայնքային փողոցներ: Ուսումնասիրության մեջ ներառվել են ներբնակավայրային փողոցները, հաշվի առնվելով, որ արդի փուլում ավելի կարևոր է ներբնակավայրային փողոցների լուսավորության առկայությունը:

Ուսումնասիրվող բոլոր համայնքներում փողոցային ցանցի լուսավորության ընդլայնման և սպասարկման աշխատանքներ և՛ նախատեսվել են, և՛ կատարվել են: Ցուցիչը համայնքների համար կարող է հանդիսանալ որպես կողմնորոշիչ՝ ՏԱՊ-երի կազմման աշխատանքներում:

**Ցուցիչ 18.** Համայնքների բյուջեներում շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով:

Միավորումից հետո ՏԻՄ-երի կողմից «Շրջակա միջավայրի պաշտպանություն» բնագավառի համար կատարվող ծախսերը բավարար չեն և չեն տարբերվում մինչ միավորման իրավիճակից:

**Ցուցիչ 19.** Ներհամայնքային հասարակական տրանսպորտի ծառայություն մատուցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ:

Վիավորված համայքներում միջբնակավայրային հասարակական տրանսպորտով ուղևորափոխադրումները շարունակում են իրականացնել մինչև համայնքների միավորումը մարզպետարանների կողմից հայտարարված մրցույթներում հաղթող ճանաչված ընկերությունները:

**Ցուցիչ 20.** Համայնքների բյուջեներում տնտեսական հարաբերությունների բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով:

Միավորված համայնքների բյուջեներում տվյալ հոդվածով ծախսերը շատ քիչ են: Գործող օրենսդրության հետևանքով՝ նշյալ բնագավառում իրականացվող ծախսերն ուղղակի ազդեցություն չեն ունենում համայնքային բյուջեում եկամուտների ավելացման վրա:

### Առաջարկություններ.

**Լիազոր մարմնին առաջարկվում է** մշակել և ներդնել նորմատիվ կարգավորումներ՝ համայնքների կողմից ծառայությունների մատուցման վիճակագրության վարման, ծառայությունների մշտադիտարկման, ծառայությունների դիմաց վճարների ամբողջական գանձման վերաբերյալ՝ ծառայությունների հասանելիության և որակի ապահովման նպատակով:

**Կրթության ոլորտում քաղաքականություն իրականացնող լիազոր մարմնին առաջարկվում է** նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար սահմանված հաստիքային միավորները և դրանց քանակը համայնքներում դարձնել ոչ պարտադիր՝ կողմնորոշիչ ֆունկցիա ունեցող:

**ՏԻՄ-երին առաջարկվում է** բնակչության սեռատարիքային կազմի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակել՝ ըստ սեռերի և տարիքային բոլոր խմբերի:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** մշակել և ներդնել օրենսդրական փոփոխություններ՝ ամրագրելու համար համայնքի կողմից դրամական աջակցության տրամադրման դեպքերը և պայմանները՝ ապահովելով այդ լիազորությունների բացառիկությունը ՏԻՄ-երի համար:

**ՀՀ կառավարությանն առաջակվում է** համայնքների միավորումից հետո նպատակային ֆինանսավորում հատկացնել ՏԻՄ-երին գլխավոր հատակագծերի պատվիրման համար:

**ՏԻՄ-երին առաջարկվում է** աղբահանության ծառայությունը մատուցել համայնքների բոլոր բնակավայրերում անխտիր՝ հաշվի առնելով սանիտարահիգիենիկ նորմերի և շրջակա միջավայրի պահպանության բացառիկ կարևորությունը:

**ՏԻՄ-երի ուշադրությունը հրավիրվում է** այն հանգամանքին, որ միջբնակավայրային հասարակական տրանսպորտով ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցման պայմանագրերի ժամկետների ավարտից հետո միջբնակավայրային հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպման պարտավորությունն ստանձնելու են ՏԻՄ-երը:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** նախաձեռնել օրենսդրական բարեփոխումներ, որոնց հետևանքով համայնքներում տնտեսական ակտիվությունն ազդեցություն կունենա համայնքների եկամուտների ավելացման վրա, ինչը կշահագրգռի ՏԻՄ-երին պատշաճ ուշադրություն դարձնելու տվյալ բնագավառին: Սա կարևոր է, քանի որ տնտեսական ակտիվության աճը նպաստում է նաև համայնքում տնային տնտեսությունների եկամուտների ավելացմանը:

Աղյուսակ 3-ում ներկայացված են «Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի (էջ 26):

Աղյուսակ 3. «Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի:

| Բնագավառ / Գործառույթ / Ցուցիչ | 1-ին խումբ | 2-րդ խումբ | 3-րդ խումբ | 4-րդ խումբ |
|---|---|---|---|---|
| | ցուցիչի արժեք / համաթիվ | | | |
| Բնագավառ 3. Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում | | | | |
| Գործառույթ 6. Սոցիալական ուղղվածություն ունեցող ծառայություններ (կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն և այլն) | | | | |
| Ցուցիչ 11. Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների տեսակարար կշիռը նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ (%) | 47.9 | 44.0 | 25.0 | 42.2 |
| | 5 | 5 | 3 | 5 |
| Ցուցիչ 12. Համայնքների բյուջեներում «կրթություն» բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 13.9 | 18.0 | 7.8 | 24.8 |
| | 7 | 9 | 4 | 10 |
| Ցուցիչ 13. Համայնքների բյուջեներում «հանգիստ, մշակույթ և կրոն» բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 4.5 | 4.1 | 3.8 | 8.9 |
| | 3 | 2 | 2 | 5 |
| Ցուցիչ 14. Համայնքների «սոցիալական պաշտպանություն» բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 0.4 | 1.7 | 1.7 | 0.7 |
| | 9 | 6 | 6 | 8 |
| Ցուցիչ 15. Համայնքի գլխավոր հատակագիծ ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 25 | 75 | 40 | 50 |
| | 3 | 8 | 4 | 5 |
| Ցուցիչ 16. Աղբահանության ծառայություն ստացող բնակավայրերի տեսակարար կշիռը բնակավայրերի ընդհանուր թվի մեջ (%) | 57.0 | 66.7 | 97.8 | 81 |
| | 6 | 7 | 10 | 9 |
| Ցուցիչ 17. Համայնքի ներբնակավայրային փողոցներից լուսավորության ծառայության ցանցում ընդգրկված փողոցների տեսակարար կշիռը (%) | 63.1 | 25.8 | 58.1 | 47.3 |
| | 7 | 3 | 6 | 5 |
| Ցուցիչ 18. Համայնքների բյուջեներում շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 7.5 | 6.4 | 2.3 | 9.0 |
| | 4 | 3 | 2 | 5 |
| Ցուցիչ 19. Ներհամայնքային հասարակական տրանսպորտի ծառայություն մատուցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 25 | 100 | 0 | 0 |
| | 3 | 10 | 0 | 0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ցուցիչ 20. Համայնքների բյուջեներում տնտեսական հարաբերությունների բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 2.9<br>1 | 7.6<br>2 | 3.0<br>1 | 3.9<br>1 |

## ԲՆԱԳԱՎԱՌ 4. ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղական ժողովրդավարություն բնագավառում հաշվարկված համաթիվն առավելագույնն է համայնքների առաջին խմբում, նվազագույնը՝ չորրորդ խմբում։

Սույն բնակավառում համաթվերի տարբերությունը պայմանավորված է միայն ՏԻՄ-երի ընտրություններում արձանագրված ցուցանիշներով՝ մասնակցության տոկոս, առաջադրված թեկնածուների թիվ։

**Գործառույթ 7. Ընտրական գործընթաց**

Վարչատարածքային բարեփոխումների երրորդ փուլում միավորված 34 համայնքում 2017 թվականի նոյեմբերի 5-ին նշանակվեցին համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների ընտրություններ՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված՝ ՏԻՄ-երի հերթական ընտրությունների անցկացման կարգով[7]։

Գործառույթը բնութագրում է միավորումից հետո ընտրական գործընթացներում արձանագրված բարելավումների մակարդակը։ Դիտարկվել են ընտրությունների այլընտրանքային լինելու հանգամանքը և ընտրողների մասնակցության մակարդակը՝ կախված միավորման մոդելներից։

2017 թվականին համայնքի ղեկավարի համար առաջադրված թեկնածուների առավելագույն թիվը ուսումնասիրված համայնքներում եղել է 6, նվազագույնը՝ 1։ Ավագանու անդամի ընտրությունների ժամանակ թեկնածուների միջին թիվը 1 տեղի համար կազմել է առավելագույնը 3.5, նվազագույնը՝ 1.1։

**Ցուցիչ 21.** Համայնքի ղեկավարի համար առաջարրդված 2 և ավել թեկնածուներ ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ։

2017 թվականի նոյեմբերի 5-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունները կրում են 2017 թվականին բնորոշ քաղաքական ազդեցությունը, որը և պայմանավորել է որոշ համայնքներում մրցակցության բացակայությունը։

**Ցուցիչ 22.** Ավագանու մեկ տեղի համար առաջարրդված 2 և ավելի թեկնածուներ ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ։

Մեկ տեղի համար թեկնածուների քանակը գերկշիռ դեպքերում չի անցնում երկուսից։ Սա թույլ է տալիս ենթադրել, որ ՏԻ համակարգում ավագանու ինստիտուտը դեռևս թույլ դերակատարում ունի։

**Ցուցիչ 23.** ՏԻՄ-երի ընտրությունների ժամանակ բնակիչների մասնակցության միջին մակարդակը։

Համայնքի ղեկավարի և ավագանու ընտրությունների միաժամանակյա անցկացման հանգամանքով պայմանավորված՝ ընտրողների մասնակցության թիվն ավանդաբար բարձր է։

[7] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 09.06.2017, ՀՕ-94-Ն

**Գործառույթ 8. Հանրային մասնակցություն և հաշվետվողականություն:**

Տեղական ժողովրդավարության կայացման նախադրյալներից է ՏԻ-ին համայնքի բնակիչների մասնակցության ապահովումը և ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

Սույն գործառույթի մասով ուսումնասիրվել են նրան բնորոշ գործիքակազմի առկայության կամ բացակայության հանգամանքը, բովանդակային մասին աղրադարձ չի կատարվել՝ համայնքների ՊՀԿ-երում անհրաժեշտ համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով:

**Ցուցիչ 24.** Համայնքի բյուջեի նախագծի հանրային քննարկումներ/լսումներ կազմակերպած և անցկացրած համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ:

Բոլոր համայնքները ֆորմալ կերպով կատարել են հանրային քննարկումներ կազմակերպելու օրենսդական պահանջը: Համայնքների ՊՀԿ-երում առկա տեղեկավությունը փաստեց, որ այդ քննարկումները/լսումները պատշաճ ձևով չեն կազմակերպվում և ավելի շատ կրում են ձևական բնույթ:

**Ցուցիչ 25.** Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ:

Միավորված բոլոր համայնքներն ունեն ՊՀԿ-եր: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ համայնքների ՊՀԿ-երում բացակայում է համայնքների կողմից միասնական ձևաչափով տվյալների հրապարակումը, հրապարակման ենթակա տեղեկատվության կազմն ամբողջական չէ: Առանձին համայնքների ՊՀԿ-երում օրենսդրությամբ հրապարակման ենթական տեղեկատվությունը տեղարդրված չէ:

**Ցուցիչ 26.** Համայնքի ղեկավարին կից գործող Խորհրդակցական մարմիններ ձևավորած համայնքների տեսակարար կշիռը:

Համայնքների ՊՀԿ-երում համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով, սույն ցուցիչի վերաբերյալ տեղեկատվությունն ստացվել է հարցման միջոցով: Օրենսդրական պահանջը ֆորմալ կերպով պահպանված է, սակայն համայնքի ղեկավարին կից խորհրդակցյական մարմինները կա՛մ չեն գործում, իսկ գործելու դեպքում՝ գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ՊՀԿ-երում բացակայում է:

**Գործառույթ 9. Ֆինանսական հաշվետվողականություն:**

**Ցուցիչ 27.** Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի հանրային քննարկումներ/լսումներ կազմակերպած և անցկացրած համայնքների տեսակարար կշիռը:

Համայնքների ՊՀԿ-երում համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով, սույն ցուցիչի վերաբերյալ տեղեկատվությունն ստացվել է հարցման միջոցով:

## Առաջարկություններ.

**ՏԻՄ-երին առաջարկվում է**, հիմք ընդունելով օրենսդրական պահանջը՝ կիրառել լիազոր մարմնի և քաղաքացիական հասարակության կողմից առաջարկվող մասնակցային

գործիքակազմը՝ ապահովելու համար համայնքի բնակիչների իրական մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** սահմանել համայնքների ՊՀԿ-երի վարման միասնական կարգ՝ ընդլայնելով հրապարակման ենթակա տեղեկատվության կազմը, ինչը կնպաստի տեղական մակարդակում մասնակցայնության, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը:

Աղյուսակ 4-ում ներկայացված են «Տեղական ժողովրդավարություն» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի (էջ 31):

Աղյուսակ 4. «Տեղական ժողովրդավարություն» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի:

| Բնագավառ / Գործառույթ / Ցուցիչ | 1-ին խումբ | 2-րդ խումբ | 3-րդ խումբ | 4-րդ խումբ |
|---|---|---|---|---|
| | ցուցիչի արժեք / համաթիվ | | | |
| Բնագավառ 4. Տեղական ժողովրդավարություն | | | | |
| Գործառույթ 7. Ընտրական գործընթաց | | | | |
| Ցուցիչ 21. Համայնքի ղեկավարի համար առաջադրված 2 և ավել թեկնածուներ ունեցող համայնքների տեսա-կարար կշիռն համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 75 | 50 | 100 | 25 |
| | 8 | 5 | 10 | 3 |
| Ցուցիչ 22. Ավագանու մեկ տեղի համար առաջադրված 2 և ավելի թեկնածուներ ունեցող համայնքների տեսա-կարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 100 | 50 | 60 | 50 |
| | 10 | 5 | 6 | 5 |
| Ցուցիչ 23. ՏԻՄ-երի ընտրությունների ժամանակ բնակիչների մասնակցության միջին մակարդակը (%) | 57.8 | 50.8 | 62.2 | 48.5 |
| | 6 | 6 | 7 | 5 |
| Գործառույթ 8. Հանրային մասնակցություն և հաշվետվողականություն | | | | |
| Ցուցիչ 24. Համայնքի բյուջեի նախագծի հանրային քննարկումներ/լսումներ կազմակերպած և անցկացրած համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 100 | 100 | 100 | 100 |
| | 10 | 10 | 10 | 10 |
| Ցուցիչ 25. Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 100 | 100 | 100 | 100 |
| | 10 | 10 | 10 | 10 |
| Ցուցիչ 26. Համայնքի ղեկավարին կից գործող Խորհրդակցական մարմիններ ձևավորած համայնքների տեսակարար կշիռը (%) | 100 | 100 | 100 | 100 |
| | 10 | 10 | 10 | 10 |
| Գործառույթ 9. Ֆինանսական հաշվետվողականություն | | | | |
| Ցուցիչ 27. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի հանրային քննարկումներ/լսումներ կազմակերպած և անցկացրած համայնքների տեսակարար կշիռը (%) | 100 | 100 | 100 | 100 |
| | 10 | 10 | 10 | 10 |

Սույն ուսումնասիրությամբ նպատակ չի դրվել վերլուծել համայնքային մակարդակում կառավարման գործընթացը: «Համայնքի կառավարում» բնագավառում հաշվարկված համաթիվը գնահատում է արդյունավետ կառավարում իրականացնելու հնարավորությունը, այլ ոչ բուն կառավարումը:

Համայնքի կառավարում բնագավառում հաշվարկված համաթիվն առավելագույնն է համայնքների առաջին խմբում, նվազագույնը՝ երրորդ խմբում:

**Գործառույթ 10. Մարդկային ռեսուրսների կառավարում:**

**Ցուցիչ 28**. Բարձրագույն կրթությամբ համայնքների ղեկավարներ ունեցող համայնքների տեսակարար կշիռն համայնքների ընդհանուր թվի մեջ:

ՀՀ օրենսդրությամբ համայնքի ղեկավարի համար կրթական ցենզ սահմանված չէ, սակայն ակնհայտ է, որ բարձրագույն կրթություն ունեցող անձը, մյուս բոլոր հավասար պայմանների դեպքում, կարող է ավելի արդյունավետ կառավարել:

Ուսումնասիրվող համայնքներում 17 համայնքի ղեկավարներից բարձրագույն կրթություն ունի 13-ը, թերի բարձրագույն՝ 1, միջին մասնագիտական՝ 3:

**Գործառույթ 11. Համայնքային ծառայություն:**

**Ցուցիչ 29.** Համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության հաստատված պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի մեջ:

Սույն ցուցիչի ցածր համաթիվը վկայում է, որ օրենսդրությամբ սահմանված ծառայությունները ՏԻՄ-երի կողմից ամբողջական ծավալով չեն մատուցվում: Միավորման գործընթացի ավարտից հետո՝ համայնքային ծառայությունների ծավալի ավելացմամբ պայմանավորված՝ ակնկալվում է նաև ցուցիչի համաթվի բարելավում:

**Ցուցիչ 30.** «Մեկ պատուհան» համայնքային կառավարման համակարգ ունեցող համայնքների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ:

«Մեկ պատուհան» համայնքային կառավարման համակարգը ՏԻՄ-երի համար արդյունավետ կառավում իրականացնելու գործիք է: Համայնքային այցելությունների ընթացքում պարզվել է, որ նախատեսվում է «Մեկ պատուհան» համայնքային կառավարման համակարգն ունենալ միավորված բոլոր համայնքներում՝ լիազոր մարմնի և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:

Աղյուսակ 5-ում ներկայացված են «Համայնքի կառավարում» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի (էջ 33):

Աղյուսակ 5. «Համայնքի կառավարում» բնագավառի ցուցիչները և դրանց համապատասխան համաթվերը՝ ըստ խմբերի:

| Բնագավառ / Գործառույթ / Ցուցիչ | 1-ին խումբ | 2-րդ խումբ | 3-րդ խումբ | 4-րդ խումբ |
|---|---|---|---|---|
| | ցուցիչի արժեք / համաթիվ | | | |
| Բնագավառ 5. Համայնքի կառավարում | | | | |
| Գործառույթ 10. Մարդկային ռեսուրսների կառավարում | | | | |
| Ցուցիչ 28. Բարձրագույն կրթությամբ համայնքների ղեկավարներ ունեցող համայնքների տեսակարար կշիռն համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 100 | 100 | 40 | 100 |
| | 10 | 10 | 4 | 10 |
| Գործառույթ 11. Համայնքային ծառայություն | | | | |
| Ցուցիչ 29. Համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության հաստատված պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի մեջ /թիվը 1000 մարդու հաշվով/ (մարդ) | 2.1 | 1.6 | 2.1 | 1.5 |
| | 3 | 2 | 3 | 2 |
| Ցուցիչ 30. «Մեկ պատուհան» համայնքային կառավարման համակարգ ունեցող համայնքների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%) | 100 | 25 | 20 | 50 |
| | 10 | 2 | 2 | 4 |

## ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ամփոփելով՝

ՏԻ 5 բնագավառում սահմանվել են 11 գործառույթ և 30 ցուցիչ: Գնահատման արդյունքում ՏԻ 2018 թվականի համաթիվը կազմել է համայնքների առաջին խմբի համար՝ 6.07, համայնքների երկրորդ խմբի համար՝ 6.61, համայնքների երրորդ խմբի համար՝ 5.79, համայնքների չորրորդ խմբի համար՝ 6.19:

Ուսումնասիրության մեթոդոլոգիայով հաշվարկված ՏԻ համաթիվն առավելագույնն է «Նախկին շրջկենտրոնից կամ քաղաքային համայնքից և գյուղական համայնքներից կազմված համայնքներ, որտեղ գյուղական համայնքներն իրենց ենթակառուցվածքներով, բնակչության թվով հակակշռում են քաղաքային համայնքի գերակշիռ դիրքին» խմբում:

Աղյուսակ 6-ում ներկայացված են համայնքային խմբերի համար համաթվի հաշվարկման արդյունքները՝ ըստ գործառույթների և ըստ բնագավառների (էջ 35):

Գծապատկեր 1-ում ներկայացված է համաթվերի համեմատականն ըստ բնագավառների և ըստ խմբերի (էջ 36):

Աղյուսակ 6.  Համայնքային խմբերի համար համաթվի հաշվարկման արդյունքները՝ ըստ գործառույթների և ըստ բնագավառների (2018թ.)

| Բնագավառ | 1-ին խումբ | 2-րդ խումբ | 3-րդ խումբ | 4-րդ խումբ |
|---|---|---|---|---|
| | համաթիվ | | | |
| Բնագավառ 1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ | 6.50 | 10.00 | 9.00 | 8.00 |
| Բնագավառ 2. Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ | 4.25 | 4.88 | 4.63 | 4.75 |
| Բնագավառ 3. Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում | 4.80 | 5.50 | 3.30 | 5.30 |
| Բնագավառ 4. Տեղական ժողովրդավարություն | 9.14 | 8.00 | 9.00 | 7.57 |
| Բնագավառ 5. Համայնքի կառավարում | 7.67 | 4.67 | 3.00 | 5.33 |
| ՏԻ 2018 թվականի համաթիվ | 6.07 | 6.61 | 5.79 | 6.19 |

Գծապատկեր 1. Համաթվերի համեմատական ըստ բնագավառների և ըստ խմբերի



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2017 թվականին ՀՀ-ում շարունակվել են իրականացվել 2015 թվականին մեկնարկած ՏԻ և վարչատարածքային բարեփոխումները, որոնց արդյունքում 325 համայնքից ձևավորվել են 34 բազմաբնակավայր համայնք: Համայնքային փնջերը կազմելու տրամաբանությունը շարունակում է մնալ անպարզ: 2017 թվականին իրականացված համայնքների միավորման գործընթացի արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ միավորվող համայնքների փնջերի ընտրության հարցում միասնական մոտեցում չի ցուցաբերվել: Հիմնավորված չէ, թե ինչու է որոշ դեպքերում նախապատվությունը տրվել նոր համայնքների ձևավորմանը ԽՍՀՄ-ի նախկին շրջանի սահմաններում, իսկ մյուս դեպքերում՝ համայնքային փնջերի ձևավորման այլ ձևաչափերի:

Վարչատարածքային բարեփոխումների գործընթացը ՀՀ-ում կիսով չափ ավարտված է. միավորման գործընթացում դեռևս չի ընդգրկվել 450 համայնք, ինչը կազմում է մինչ բարեփոխումների մեկնարկը եղած համայնքների ընդհանուր թվի համարյա կեսը:

Ուսումնասիրվող համայնքներում արձանագրվել են ցածր համաթվեր «Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ» և «Համայնքի կառավարում» բնագավառներում, ինչը պայմանավորված է օբյեկտիվ պայտճառներով, որոնք առկա էին մինչ միավորումը և շարունակում են մնալ միավորումից հետո: Համայնքների ֆինանսական անկախության մակարդակը շարունակում է մնալ ցածր, իսկ համայնքային սեփականությունը և ենթակառուցվածքները՝ հիմնականում նորացման կարիք ունեն: Վերոնշյալ հանգամանքով պայմանավորված՝ համայնքներում արդյունավետ կառավարման իրականացումը շարունակում է մնալ խնդրահարույց:

Միավորումը հնարավորություն է տվել բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի բնակիչներին ունենալու այնպիսի համայնքային ծառայություններ, որոնք նախկինում չեն մատուցվել իրենց բնակավայրերում: Սակայն միավորումից հետո ևս համայնքային ծառայությունների մատուցումը բազմաբնակավայր համայնքներում ոչ միշտ է հասանելի համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին:

Ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ միավորված մոդելներից որևէ մեկը չի ստացել առավելագույն կամ նվազագույն համաթիվ ՏԻ բոլոր բնագավառներում. տարբեր մոդելնել առավելագույն համաթիվ ստացել են տարբեր բնագավառներում:

ՀՀ ՏԻ օրենսդրությունն առավելապես բավարար է համայնքներում տեղական ժողովրդավարության կայացման և զարգացման համար: Տեղական ժողովրդավարության սկզբունքները և ընթացակարգերը դեռևս իրապես չեն կիրառվում հիմնական դերակատարների՝ ՏԻՄ-երի, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից:

Միավորվող համայնքային փնջերը հնարավոր չէ ձևավորել միայն առավելագույն համաթիվ ստացած մոդելի՝ Նախկին շրջկենտրոնից կամ քաղաքային համայնքից և գյուղական համայնքներից կազմված համայնքներ, որտեղ գյուղական համայնքներն իրենց

ենթակառուցվածքներով, բնակչության թվով հակակշռում են քաղաքային համայնքի գերակշիռ դիրքին, ձևաչափով:

**Լիազոր մարմնին առաջարկվում է**, համայնքների միավորման նոր փնջերը նախագծելիս՝ համատեղել տնտեսական հաշվարկները և սույն ուսումնասիրության արդյունքները:

Հիմք ընդունելով, որ համայնքային փնջերի ձևավորման երկրոդ մոդելը ուսումնասիրվածներից լավագույնն է, **լիազոր մարմնին առաջարկվում է** նախապատվությունը տալ միավորման երկրորդ մոդելին, անհնարինության դեպքում՝ դիտարկել այլ ձևաչափեր:

**Լիազոր մարմնին առաջարկվում է** մշակել և ներդնել ՀՀ համայնքների գործունեության տարեկան գնահատման պրակտիկա՝ օգտագործելով համաթվի հաշվարկի մեթոդոլոգիան:

Աղյուսակ 7.  ՏԻՏԻ ցուցիչների գնահատումը՝ ըստ ՏԻ բնագավառների և գործառույթների

| Բնագավառ / Գործառույթ / Ցուցիչ | | Գնահատման սանդղակը | Ցուցիչի գնահատումը |
|---|---|---|---|
| Բնագավառ 1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ | | | |
| Գործառույթ 1. Վարչատարածքային բարեփոխումներ | | | |
| Ցուցիչ 1. Մեկ համայնքի բնակչության միջին թիվը խմբում (մարդ) | 10 | Կատարյալ | 16001-ից 19000 մարդ |
| | 9 | Շատ լավ | 12001-ից 16000 մարդ/ 19001 -ից 23000 մարդ |
| | 8 | Լավ | 8201-ից 12000 մարդ / 23001-ից 26000 մարդ |
| | 7 | Բավականին լավ | 5601-ից 8200 մարդ / 26001-ից 29000 մարդ |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 4201-ից 5600 մարդ / 29001-ից 35000 մարդ |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 3001-ից 4200 մարդ / 35001-ից 42000 մարդ |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 2101-ից 3000 մարդ / 42001-ից 50000 մարդ |
| | 3 | Բավականին վատ | 1501-ից 2100 մարդ / 50001-ից ավելի մարդ |
| | 2 | Վատ | 1001-ից 1500 մարդ |
| | 1 | Շատ վատ | 1000-ից քիչ |
| | 0 | Գոյություն չունի | 0 |
| Ցուցիչ 2. Մեկ համայնքի վարչական տարածքի միջին չափը խմբում (կմ$^2$) | 10 | Կատարյալ | 270.01-ից 330 կմ2 |
| | 9 | Շատ լավ | 200.01-ից 270 կմ2 / 330.01-ից 400 կմ2 |
| | 8 | Լավ | 140.01-ից 200 կմ2 / 400.01-ից 510 կմ2 |
| | 7 | Բավականին լավ | 90.01-ից 140 կմ2 / 510.01-ից 670 կմ2 |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 60.01-ից 90 կմ2 / 670.01-ից 880 կմ2 |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 40.01-ից 60 կմ2 / 880.01-ից 1150 կմ2 |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 20.01-ից 40 կմ2 / 1150.01-ից 1500 կմ2 |
| | 3 | Բավականին վատ | 10.01-ից 20 կմ2 / 1500.01 կմ2-ից մեծ |
| | 2 | Վատ | 3.01-ից 10 կմ2 |
| | 1 | Շատ վատ | 3 կմ2-ից փոքր |
| | 0 | Գոյություն չունի | 0 |
| Բնագավառ 2. Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ | | | |
| Գործառույթ 2. Համայնքի սեփականություն | | | |
| Ցուցիչ 3. Համայնքների բյուջեների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում (%) | 10 | Կատարյալ | > 45.0 % |
| | 9 | Շատ լավ | 40.1 - 45.0 % |
| | 8 | Լավ | 35.1 - 40.0 % |
| | 7 | Բավականին լավ | 30.1 - 35.0 % |

| | | | |
|---|---|---|---|
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 25.1 - 30.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 20.1 - 25.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 15.1 - 20.0 % |
| | 3 | Բավականին վատ | 10.1 - 15.0 % |
| | 2 | Վատ | 5.1 - 10.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 5.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Ցուցիչ 4. Օգտագործման տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի (վարելահող, խոտհարք, արոտ) տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%) | 10 | Կատարյալ | > 90% |
| | 9 | Շատ լավ | 80.1 - 90.0 % |
| | 8 | Լավ | 70.1 - 80.0 % |
| | 7 | Բավականին լավ | 60.1 - 70.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 50.1 - 60.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 40.1 - 50.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 30.1 - 40.0 % |
| | 3 | Բավականին վատ | 20.1 - 30.0 % |
| | 2 | Վատ | 10.1 - 20.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 20.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Գործառույթ 3. Համայնքի զարգացման ծրագրեր և բյուջե (պլանավորում և բյուջետավարում) | | | |
| Ցուցիչ 5. Բնակավայրերի ընդգրկվածությունը համայնքի զարգացման ծրագրերում (%) | 10 | Կատարյալ | 100.0 % |
| | 9 | Շատ լավ | 90.1 - 99.9 % |
| | 8 | Լավ | 80.1 - 90.0 % |
| | 7 | Բավականին լավ | 70.1 - 80.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 60.1 - 70.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 50.1 - 60.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 40.1 - 50.0 % |
| | 3 | Բավականին վատ | 30.1 - 40.0 % |
| | 2 | Վատ | 20.1 - 30.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 20.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0 % |
| Ցուցիչ 6. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը 2018 թվականին (%) | 10 | Կատարյալ | 100.0 % |
| | 9 | Շատ լավ | 90.1 - 99.9 % |
| | 8 | Լավ | 80.1 - 90.0 % |
| | 7 | Բավականին լավ | 70.1 - 80.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 60.1 - 70.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 50.1 - 60.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 40.1 - 50.0 % |
| | 3 | Բավականին վատ | 30.1 - 40.0 % |
| | 2 | Վատ | 20.1 - 30.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 20.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0 % |
| Գործառույթ 4. Համայնքի բյուջետային եկամուտներ և ծախսեր | | | |
| Ցուցիչ 7. Համայնքների բյուջեների եկամուտների հանրագումարի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ (%) | 10 | Կատարյալ | > 100.0 % |
| | 9 | Շատ լավ | 97.1 - 100.0 % |
| | 8 | Լավ | 94.1 - 97.0 % |
| | 7 | Բավականին լավ | 91.1 - 94.0 % |

| | | | |
|---|---|---|---|
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 88.1 - 91.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 85.1 - 88.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 82.1 - 85.0 % |
| | 3 | Բավականին վատ | 79.1 - 82.0 % |
| | 2 | Վատ | 76.1 - 79.0 % |
| | 1 | Շատ վատ | < 76.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Ցուցիչ 8. Համայնքների բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 10 | Կատարյալ | > 400 $ |
| | 9 | Շատ լավ | 361 – 400 $ |
| | 8 | Լավ | 316 – 360 $ |
| | 7 | Բավականին լավ | 271 – 315 $ |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 226 – 270 $ |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 181 – 225 $ |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 136 – 180 $ |
| | 3 | Բավականին վատ | 91 – 135 $ |
| | 2 | Վատ | 46 – 90 $ |
| | 1 | Շատ վատ | 01 – 45 $ |
| | 0 | Գոյություն չունի | 0 $ |
| Ցուցիչ 9. Համայնքների բյուջեների սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (համայնքների ֆինանսական անկախությունը կամ ինքնուրույնությունը) (%) | 10 | Կատարյալ | 90.1 - 100.0 % |
| | 9 | Շատ լավ | 80.1 - 90.0 % |
| | 8 | Լավ | 70.1 - 80.0 % |
| | 7 | Բավականին լավ | 60.1 - 70.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 50.1 - 60.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 40.1 - 50.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 30.1 - 40.0 % |
| | 3 | Բավականին վատ | 20.1 - 30.0 % |
| | 2 | Վատ | 10.1 - 20.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 10.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Գործառույթ 5. ՏԻՄ-երի լիազորությունների և ֆինանսների համապատասխանություն | | | |
| Ցուցիչ 10. Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերում (%) | 10 | Կատարյալ | <= 5.0 % |
| | 9 | Շատ լավ | 5.1 - 10.0 % |
| | 8 | Լավ | 10.1 - 15.0 % |
| | 7 | Բավականին լավ | 15.1 - 20.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 20.1 - 25.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 25.1 - 30.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 30.1 - 35.0 % |
| | 3 | Բավականին վատ | 35.1 - 40.0 % |
| | 2 | Վատ | 40.1 - 45.0 % |
| | 1 | Շատ վատ | > 45.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 100.0% |
| Բնագավառ 3. Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում | | | |
| Գործառույթ 6. Սոցիալական ուղղվածություն ունեցող ծառայություններ (կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն և այլն) | | | |
| Ցուցիչ 11. Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված | 10 | Կատարյալ | > 90% |
| | 9 | Շատ լավ | 80.1 - 90.0 % |

| | | | |
|---|---|---|---|
| երեխաների տեսակարար կշիռը նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ (%) | 8 | Լավ | 70.1 - 80.0 % |
| | 7 | Բավականին լավ | 60.1 - 70.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 50.1 - 60.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 40.1 - 50.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 30.1 - 40.0 % |
| | 3 | Բավականին վատ | 20.1 - 30.0 % |
| | 2 | Վատ | 10.1 - 20.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 10.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Ցուցիչ 12. Համայնքների բյուջեներում «կրթություն» բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 10 | Կատարյալ | > 20 $ |
| | 9 | Շատ լավ | 17.7 - 20.0 $ |
| | 8 | Լավ | 15.5 - 17.6 $ |
| | 7 | Բավականին լավ | 13.3 - 15.4 $ |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 11.1- 13.2 $ |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 8.9 - 11.0 $ |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 6.7 - 8.8 $ |
| | 3 | Բավականին վատ | 4.5 - 6.6 $ |
| | 2 | Վատ | 2.3 - 4.4 $ |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 2.2 $ |
| | 0 | Գոյություն չունի | 0 $ |
| Ցուցիչ 13. Համայնքների բյուջեներում «հանգիստ, մշակույթ և կրոն» բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 10 | Կատարյալ | > 20 $ |
| | 9 | Շատ լավ | 17.7 - 20.0 $ |
| | 8 | Լավ | 15.5 - 17.6 $ |
| | 7 | Բավականին լավ | 13.3 - 15.4 $ |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 11.1- 13.2 $ |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 8.9 - 11.0 $ |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 6.7 - 8.8 $ |
| | 3 | Բավականին վատ | 4.5 - 6.6 $ |
| | 2 | Վատ | 2.3 - 4.4 $ |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 2.2 $ |
| | 0 | Գոյություն չունի | 0 $ |
| Ցուցիչ 14. Համայնքների «սոցիալական պաշտպանություն» բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 10 | Կատարյալ | 0 $ |
| | 9 | Շատ լավ | 0.1- 0.5 $ |
| | 8 | Լավ | 0.6 - 1.0 $ |
| | 7 | Բավականին լավ | 1.1 - 1.5 $ |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 1.6 - 2.06 $ |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 2.1 - 2.55 $ |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 2.6 - 3.04 $ |
| | 3 | Բավականին վատ | 3.1 - 3.53 $ |
| | 2 | Վատ | 3.6 - 4.02 $ |
| | 1 | Շատ վատ | 4.1 $ > |
| | 0 | Գոյություն չունի | - |
| Ցուցիչ 15. Համայնքի գլխավոր հատակագիծ ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 10 | Կատարյալ | > 90% |
| | 9 | Շատ լավ | 80.1 - 90.0 % |
| | 8 | Լավ | 70.1 - 80.0 % |
| | 7 | Բավականին լավ | 60.1 - 70.0 % |

| | | | |
|---|---|---|---|
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 50.1 - 60.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 40.1 - 50.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 30.1 - 40.0 % |
| | 3 | Բավականին վատ | 20.1 - 30.0 % |
| | 2 | Վատ | 10.1 - 20.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 10.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Ցուցիչ 16. Աղբահանության ծառայություն ստացող բնակավայրերի տեսակարար կշիռը բնակավայրերի ընդհանուր թվի մեջ (%) | 10 | Կատարյալ | > 90.0 % |
| | 9 | Շատ լավ | 80.1 - 90.0 % |
| | 8 | Լավ | 70.1 - 80.0 % |
| | 7 | Բավականին լավ | 60.1 - 70.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 50.1 - 60.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 40.1 - 50.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 30.1 - 40.0 % |
| | 3 | Բավականին վատ | 20.1 - 30.0 % |
| | 2 | Վատ | 10.1 - 20.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 10.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Ցուցիչ 17. Համայնքի ներբնակավայրային փողոցներից լուսավորության ծառայության ցանցում ընդգրկված փողոցների տեսակարար կշիռ (%) | 10 | Կատարյալ | > 90.0 % |
| | 9 | Շատ լավ | 80.1 - 90.0 % |
| | 8 | Լավ | 70.1 - 80.0 % |
| | 7 | Բավականին լավ | 60.1 - 70.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 50.1 - 60.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 40.1 - 50.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 30.1 - 40.0 % |
| | 3 | Բավականին վատ | 20.1 - 30.0 % |
| | 2 | Վատ | 10.1 - 20.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 10.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Ցուցիչ 18. Համայնքների բյուջեներում շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 10 | Կատարյալ | > 20 $ |
| | 9 | Շատ լավ | 17.7 - 20.0 $ |
| | 8 | Լավ | 15.5 - 17.6 $ |
| | 7 | Բավականին լավ | 13.3 - 15.4 $ |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 11.1- 13.2 $ |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 8.9 - 11.0 $ |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 6.7 - 8.8 $ |
| | 3 | Բավականին վատ | 4.5 - 6.6 $ |
| | 2 | Վատ | 2.3 - 4.4 $ |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 2.2 $ |
| | 0 | Գոյություն չունի | 0 $ |
| Ցուցիչ 19. Ներհամայնքային հասարակական տրանսպորտի ծառայություն մատուցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 10 | Կատարյալ | > 90.0 % |
| | 9 | Շատ լավ | 80.1 - 90.0 % |
| | 8 | Լավ | 70.1 - 80.0 % |
| | 7 | Բավականին լավ | 60.1 - 70.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 50.1 - 60.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 40.1 - 50.0 % |

| | | | |
|---|---|---|---|
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 30.1 - 40.0 % |
| | 3 | Բավականին վատ | 20.1 - 30.0 % |
| | 2 | Վատ | 10.1 - 20.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 10.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Ցուցիչ 20. Համայնքների բյուջեներում տնտեսական հարաբերությունների բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար) | 10 | Կատարյալ | > 49.5 $ |
| | 9 | Շատ լավ | 44.1 - 49.5 $ |
| | 8 | Լավ | 38.6 - 44.0 $ |
| | 7 | Բավականին լավ | 33.1 - 38.5 $ |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 27.6 - 33.0 $ |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 22.1 - 27.5 $ |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 16.6 - 22.0 $ |
| | 3 | Բավականին վատ | 11.1 - 16.5 $ |
| | 2 | Վատ | 5.6 - 11.0 $ |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 5.5 $ |
| | 0 | Գոյություն չունի | 0 $ |
| Բնագավառ 4. Տեղական ժողովրդավարություն | | | |
| Գործառույթ 7. Ընտրական գործընթաց | | | |
| Ցուցիչ 21. Համայնքի ղեկավարի համար առաջարրդված 2 և ավել թեկնածուներ ունեցող համայնքների տեսակարար կշիռն համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 10 | Կատարյալ | 100% |
| | 9 | Շատ լավ | 85.1 - 99.9 % |
| | 8 | Լավ | 70.1 - 85.0 % |
| | 7 | Բավականին լավ | 60.1 - 70.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 50.1 - 60.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 40.1 - 50.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 30.1 - 40.0 % |
| | 3 | Բավականին վատ | 20.1 - 30.0 % |
| | 2 | Վատ | 10.1 - 20.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 10.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0 % |
| Ցուցիչ 22. Ավագանու մեկ տեղի համար առաջարրդված 2 և ավելի թեկնածուներ ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 10 | Կատարյալ | 100% |
| | 9 | Շատ լավ | 85.1 - 99.9 % |
| | 8 | Լավ | 70.1 - 85.0 % |
| | 7 | Բավականին լավ | 60.1 - 70.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 50.1 - 60.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 40.1 - 50.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 30.1 - 40.0 % |
| | 3 | Բավականին վատ | 20.1 - 30.0 % |
| | 2 | Վատ | 10.1 - 20.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 10.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0 % |
| Ցուցիչ 23. ՏԻՄ-երի ընտրությունների ժամանակ բնակիչների մասնակցության միջին մակարդակը (%) | 10 | Կատարյալ | > 90.0 % |
| | 9 | Շատ լավ | 80.1 - 90.0 % |
| | 8 | Լավ | 70.1 - 80.0 % |
| | 7 | Բավականին լավ | 60.1 - 70.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 50.1 - 60.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 40.1 - 50.0 % |

| | | | |
|---|---|---|---|
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 30.1 - 40.0 % |
| | 3 | Բավականին վատ | 20.1 - 30.0 % |
| | 2 | Վատ | 10.1 - 20.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 10.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Գործառույթ 8. Հանրային մասնակցություն և հաշվետվողականություն | | | |
| Ցուցիչ 24. Համայնքի բյուջեի նախագծի հանրային քննարկումներ/լսումներ կազմակերպած և անցկացրած համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 10 | Կատարյալ | 100% |
| | 9 | Շատ լավ | 90.1 - 99.9 % |
| | 8 | Լավ | 80.1 - 90.0 % |
| | 7 | Բավականին լավ | 70.1 - 80.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 60.1 - 70.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 50.1 - 60.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 40.1 - 50.0 % |
| | 3 | Բավականին վատ | 30.1 - 40.0 % |
| | 2 | Վատ | 15.1 - 30.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 15.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Ցուցիչ 25. Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 10 | Կատարյալ | 100% |
| | 9 | Շատ լավ | 90.1 - 99.9 % |
| | 8 | Լավ | 80.1 - 90.0 % |
| | 7 | Բավականին լավ | 70.1 - 80.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 60.1 - 70.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 50.1 - 60.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 40.1 - 50.0 % |
| | 3 | Բավականին վատ | 30.1 - 40.0 % |
| | 2 | Վատ | 15.1 - 30.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 15.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Ցուցիչ 26. Համայնքի ղեկավարին կից գործող Խորհրդակցական մարմիններ ձևավորած համայնքների տեսակարար կշիռը (%) | 10 | Կատարյալ | 100% |
| | 9 | Շատ լավ | 90.1 - 99.9 % |
| | 8 | Լավ | 80.1 - 90.0 % |
| | 7 | Բավականին լավ | 70.1 - 80.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 60.1 - 70.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 50.1 - 60.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 40.1 - 50.0 % |
| | 3 | Բավականին վատ | 30.1 - 40.0 % |
| | 2 | Վատ | 15.1 - 30.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 15.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Գործառույթ 9. Ֆինանսական հաշվետվողականություն | | | |
| Ցուցիչ 27. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի հանրային քննարկումներ/լսումներ կազմակերպած և անցկացրած համայնքների տեսակարար կշիռը (%) | 10 | Կատարյալ | 100% |
| | 9 | Շատ լավ | 90.1 - 99.9 % |
| | 8 | Լավ | 80.1 - 90.0 % |
| | 7 | Բավականին լավ | 70.1 - 80.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 60.1 - 70.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 50.1 - 60.0 % |

| | | | |
|---|---|---|---|
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 40.1 - 50.0 % |
| | 3 | Բավականին վատ | 30.1 - 40.0 % |
| | 2 | Վատ | 15.1 - 30.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 15.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0% |
| Բնագավառ 5. Համայնքի կառավարում | | | |
| Գործառույթ 10. Մարդկային ռեսուրսների կառավարում | | | |
| Ցուցիչ 28. Բարձրագույն կրթությամբ համայնքների ղեկավարներ ունեցող համայնքների տեսակարար կշիռն համայնքների ընդհանուր թվի մեջ (%) | 10 | Կատարյալ | 100.0 % |
| | 9 | Շատ լավ | 90.1 - 99.9 % |
| | 8 | Լավ | 80.1 - 90.0 % |
| | 7 | Բավականին լավ | 70.1 - 80.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 60.1 - 70.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 50.1 - 60.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 40.1 - 50.0 % |
| | 3 | Բավականին վատ | 30.1 - 40.0 % |
| | 2 | Վատ | 20.1 - 30.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 20.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0 % |
| Գործառույթ 11. Համայնքային ծառայություն | | | |
| Ցուցիչ 29. Համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության հաստատված պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի մեջ/ թիվը 1000 մարդու հաշվով (մարդ) | 10 | Կատարյալ | > 5.0 |
| | 9 | Շատ լավ | 4.6 - 5.0 |
| | 8 | Լավ | 4.1 - 4.5 |
| | 7 | Բավականին լավ | 3.6 - 4.0 |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 3.1 - 3.5 |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 2.6 - 3.0 |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 2.3 - 2.5 |
| | 3 | Բավականին վատ | 1.9 - 2.2 |
| | 2 | Վատ | 1.5 - 1.8 |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 1.4 |
| | 0 | Գոյություն չունի | 0 |
| Ցուցիչ 30. «Մեկ պատուհան» համայնքային կառավարման համակարգ ունեցող համայնքների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%) | 10 | Կատարյալ | 100.0 % |
| | 9 | Շատ լավ | 90.1 - 99.9 % |
| | 8 | Լավ | 80.1 - 90.0 % |
| | 7 | Բավականին լավ | 70.1 - 80.0 % |
| | 6 | Ավելի շատ լավ, քան վատ | 60.1 - 70.0 % |
| | 5 | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | 50.1 - 60.0 % |
| | 4 | Ավելի շատ վատ, քան լավ | 40.1 - 50.0 % |
| | 3 | Բավականին վատ | 30.1 - 40.0 % |
| | 2 | Վատ | 20.1 - 30.0 % |
| | 1 | Շատ վատ | 0.1 - 20.0 % |
| | 0 | Գոյություն չունի | 0 % |

**Հղումներ**


1. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-93-Ն օրենք

2. Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ) Մեթոդաբանություն, Երևան, Վան Արյան, 2017, ISBN 978-9939-70-221-6

3. Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ) Մեթոդաբանություն, Երևան, Վան Արյան, 2017, ISBN 978-9939-70-221-6, էջ 6-7

4. 6 մարտի 2014 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարություն թիվ 214-ա «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու մասին» որոշում

5. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 07.05.2002թ., ՀՕ-337, Հոդված 31 (16.01.2018, ՀՕ-66-Ն փոփոխություններով)

6. 26 հունվարի 2007 թվականի ՀՀ կրթության և գիտության նախարարի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» թիվ 29-Ն հրաման

7. 2017 թվականի 9 հունիսի ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք ՀՕ-94-Ն


**Տեղեկատվության հիմնական աղբյուրներ**


ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով), https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510

Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20822, https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/122

Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի բացատրական զեկույց, https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/207

Համայնքների միավորման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=73958

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125341

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121480

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122731

Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշում, https://www.gov.am/files/docs/3133.pdf

ՀՀ 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարություն, https://www.egov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf

ՀՀ 2018-2020թթ. տարածքային զարգացման գործառնական ծրագիր, http://www.mtad.am/files/docs/2049.pdf

ԵԽ Տարածքային և տեղական իշխանությունների կոնգրեսի Տեղական իշխանությունների պալատի կողմից 2014թ. մարտի 26-ին ընդունված թիվ CPL(26) 2 FINAL «Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում» փաստաթուղթ, http://www.mtad.am/files/docs/813.pdf, https://rm.coe.int/168071a25f

Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, https://www.arlis.am/

ՀՀ էլեկտրոնային կառավարում, https://www.e-gov.am

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, http://www.mtad.am

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, https://www.elections.am

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, https://www.armstat.am

Շիրակի մարզի Անի համայնք, http://anicity.am

Շիրակի մարզի Ախուրյան համայնք, http://akhuryan.am

Շիրակի մարզի Մարմարաշեն համայնք, http://marmashen.am

Արագածոտնի մարզի Ապարան համայնք, http://aparan.am

Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք, http://tsaghkahovithamaynq.am

Լոռու մարզի Ստեփանավան համայնք, http://stepanavan.am

Լոռու մարզի Տաշիր համայնք, http://tashircity.am

Լոռու մարզի Գյուլագարակ համայնք, http://gyulagarak.am

Կոտայքի մարզի Չարենցավան համայնք, http://charentsavan.am

Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք, http://byureghavan-kotayk.am

Կոտայքի մարզի Եղվարդ համայնք, http://yeghvard.am

Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք, http://meghradzor.am

Տավուշի մարզի Բերդ համայնք, http://berdcity.am

Վայոց Ձորի մարզի Արենի համայնք, http://arpaareni.am

Սյունիքի մարզի Սիսիան համայնք, http://sisian.am

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք, http://vardenik.am

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք, http://chambarak.am

Շիրակի մարզպետարան, http://shirak.mtad.am/

Արագածոտնի մարզպետարան, http://aragatsotn.mtad.am/

Լոռու մարզպետարան, http://lori.mtad.am/

Կոտայքի մարզպետարան, http://kotayk.mtad.am/

Տավուշի մարզպետարան, http://tavush.mtad.am/

Գեղարքունիքի մարզպետարան, http://gegharkunik.mtad.am/

Վայոց ձորի մարզպետարան,  http://vdzor.mtad.am/

Սյունիքի մարզպետարան, http://syunik.mtad.am/

Google Maps, https://www.google.com/maps/place/